

ԳԱՄԱԼԵԱՆՑ Ա.

# ՂԵՆ ԹԱԴԱԿԱՐԻ ԱՂՋԻԿԱՐ

Հ Ե Ք Ե Ա Թ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Յովհաննես Մարտիրոսեանցի

Երև. Ա. Մարտիրոսյանց գլուխ, Օբ. շն., № 1-2.

1894

ԱԿՐՈ  
349

2004

ԱՅՐԱԲ  
349

3

ԳԱՄԱԼԵԱՆՑ Ա.

ԿԵՐ

# ՂԵՆ ԹԱՐԱԿՈՐԻ

Ա. Դ. Զ. Ի. Կ. Ը.

Հ Ե Ք Ե Ա Թ.

5  
8  
8



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Յովհաննես Մարտիրոսեանցի:



Տպ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍ ԸԱՆ ԸՆ, Օրբ. յն., № 1—2.



1894

4452

ԳԱՆՀԱԿԻ ՀԹԻՓՍԻՍ ԵԸՆ ՕՐ. ԵՐԿԴԱՍԵՄՆ  
ԴՊՐՈՅԻ ԱՃԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐԻՆ.

Ձե՛զ սիրելի աշակերտուհիներ, որ պաշտօնէս հեռանալիս տխրեցիք ու լացիք, ձե՛զ եմ՝ նովիումայս գրքոյկո։ Էլ վարձ ու ոռօճկ ի՞նչ կ'անէի, եթք ձեր սիրան ու արտասովք հետո էի տանում։

Այժմ՝ ձեզ մեծ բնձայ չեմ տալիս, քայց տուած գրքոյկոս մէջ մի այնպիսի պատմութիւն կայ, որ եթէ կարդաք, այնքան կըսիրէք, որ կ'ուզէք մէկ էլ կարդալ։

Ձեր հայ լեզուի ուսուցիչ ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի սրտի փափազը հէնց այդ է, որից ոչինչ։

1893 թ. Թիֆլիք։

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎԵԱՆԵԱՆ ԴՊՐՈՅ



349-2001

(3961)  
41

հ8349



¶

Մի թագաւոր կար հալուստ ու սղորմած.  
ով իւր մօտ էր գալիս, դատարկ չէր ճամբում.  
որին փողով էր օգնում, որին խորհրդով: Նրա  
աշխարհում ամենն էլ զոհ էին և մխիթարուած:  
Գուռը մէկ էր, եկող աղքատն ու անճարը հա-  
զար. ուզողին անխնալ տալիս էր. «չէ» չկար:  
Ամենն էլ ասում էին. - շէն մնաս, թագաւոր, ծո-  
ցրդ լիքը կենայ: Քանի մալիս էր, ալնքան շէ-  
նանում ու լցում էր, այդ պատճառով անունը  
կպաւ ձէն Թագաւոր: Սովորաբար ասում էր. «վաղ-  
ուշ առաջիս մահ կայ ամեն օր հարստութիւնը  
ձեռիս չի մնալ. լաւ է բարտթիւններ անեմ»:  
Այդ մտքով իւր աշխարհը շրջում էր, խեղճ ու  
տառապեալի ցաւերը լսում, դարման անում:

Ճէն Թագաւորը իրան պէս օրհնուած մի կին  
ունէր, երկու ծաղիկ<sup>1)</sup> էլ հետը. մինը տղայ,  
միւսը աղջիկ: Աղջիկը մի զարմանք արարած էր.

խոնարհ ու անմեղ էր, ինչպէս գառը, ճերմակ ու կարմիր էր, ինչպէս նորափթիթ զեղձի ծառ. երեսհարքն <sup>1)</sup> էլ այնպէս քնքուշ էր ու սիրուն, ինչպէս կարմրութուշ խնձոր ու ծիրան: Պալատից դուրս եկողը աղջկայ գովքն էր անում. մինն ասում էր՝ ալիւրի նման շարմաղ է. միւսն ասում էր՝ նուան կարմիր հատիկ է. երրորդը թէ՝ միամորի ճիպոտ է: Խոկ աղքատները, որոնք միշտ նրա ձեռիցն էին ողորմութիւն ստանում, աղունիկ էին կանչում: Աղունիկ էլ մնաց անունը: Հայրը վճռել էր Աղունիկին տալ մի աղքատ տղի, որ լինէր խելօք և արդար: Տղի համար էլ որոշել էր հարսնացու ճարել չունեոր օջախից: Թագաւորի այս վճռների վրայ շատ մարդու խելքի ծէրը գնում էր: Տղէն երբ չափահաս դարձաւ, զէն Թագաւորն ասաց.

— Ինա, որդի, հարսնացու ընտրիր. վեց ամիս քեզ ժամանակ եմ տալիս: Աշխատիր չխաբուիս: Եւելի սրտիդ ընտրածին հաւանիր, քան թէ աչքերիդ: Ի՞նչ տեսակն էլ ընտրես, ինձ ընդունելի է, միայն զգո՞շ կաց, որդիս, աղքատ ու հպարտից:

— Պիամիտ կաց, հայր իմ, կ'աշխատեմ բերածս քո սրտովլ-լինի, ասաց տղէն ու պալատական իշխանի հետ ճամբայ ընկաւ:

Երբ բաւական տեղ զնացել էին, իշխանը խօսք բաց արեց.

— Թագաւորազը ողջ լինի, այդ բան էր, որ թագաւորն արեց: Ես հաստատ գիտեմ, որ քո աչքը իմ աղջկայ վրէն էր:

— Ճշմարիտ այդպէս է, պատասխանեց թագաւորազը, բայց ձեռովով ինչ է գալիս: Հօրարածին հակառակել չեմ կարող. նրա որոշումն է, որ ես աղքատի աղջիկ ուզեմ, իսկ գու հարուստ ես:

— Իմաստուն կարգագրութիւն է հօրդ արածը, մտքումը ծիծագելով խօսեց իշխանը. աղքատ աղջիկները միշտ խոնարհ են լինում, ով է բան ասում: Աւելի լաւ է հօրդ հնազանդես: Վնաս չունի, իմ աղջիկն էլ մի երիտասարդի կըտամ. ինչ անեմ որ շատ էլ գովական չի լինի, բայց մեծ հոգս է հարկաւոր որ թագաւորի հարսը լինի աննման թէ զեղեցիութիւնով և թէ շնորքով:

Թագաւորազը, որ բարեսիրտ ու միամիտ տղայ էր, վրայ բերեց.

— Ճատ շնորհակալ եմ, իշխան. Ինչ ասել կ'ուզի որ զու փորձառաւթիւնով ու խորհուրդներովդ պէտք է օգնես ինձ. Հայրս այդ մտքով քեզ ընկեր կարգեց: Առանց քու յօժարութեան ես ոչովի հարսնացու չեմ ընտրել:

— Իմ գլուխը սիրելի թագաւորազի ճամբին վէր դրած է. ինչ նեղութիւններ ասես, պատրաստ եմ, պատասխանեց իշխանը և դոհ սրտով շարունակեց ճամբէն:

Ամեն տեղ ձայն էր ընկել, թէ թագաւորի համար հարսնացուի են ման զալիս: Քաղաքում թէ զիւղում մեծ պատուով ընդունում, ընտիրու գեղեցիկ աղջիկներ էին ցոյց տալիս, ամենն էլ աղքատ տանից, մինը քանզմիւսը գեղեցիկ. թագաւորազը ուզում էր նշան տալ, բայց իշխանը քար էր խառնում և մտադրութիւնից ետ կացնում: Թագաւորազը միամիտ էր. բարի մտքով էր մեկնում նրա խափանելը. բայց ճշշմարիտն այն էր, որ իշխանը զէն թագաւորի վրայ բարկացած, ուզում էր նրա որդու վիզը մի աղքատ ու հպարտ աղջիկ կապել և դրանով իւր վրէժը հանել: Նշանադրութիւնը այսօր կամ վազը զցելով այնքան ծածուկ հարցուփորձ արեց, որ վերջապէս իւր փնտրած աղջիկը դժաւ. աղքատ ու գեղեցիկ, բայց կոռարար ու ամբարիշտ:

— Թագաւորազը ողջ լինի, քու ուզած հարսնացուն ես արդէն գտել եմ. ամեն բանով գովական, ամեն բանով շնորհալի: Բայց որովհետև մենք շատ աղջիկներ տեսել ու չենք հաւանել, հիմա նրանց բարեկամները նախանձելուց սկսե-

լու են վատաբանել մեր ջոկածին: Աշխարհիս բանն ալգակս է. աւելի լաւ է շտապենք, ալգ աղջկան տեսնենք. թէ հաւանես, նշան տանք: Լսել եմ որ նրա ծնողները աղքատութիւնից ուզում են մի հարբանի վրայ ծախեց:

— Գնանք, գնանք, իշխան, ձեռից չղցենք ալգակս լաւ աղջիկը, հաւանութիւն տուեց նրա խօսքին թագաւորազը և շտապ քալերով հասաւ աղջկատուն: Հէնց որ երեսի գեղեցկութիւնն ուժիրուն հասակը տեսաւ, մնաց նայելիս: Խորամանկ իշխանը այս բանը որ նկատեց, ուրախացաւ իւր սրտում. ուզածը յաջողւում էր: Մոտեցաւ ականջի տակին փոփոաց.

— Թագաւորազ տէր, մենակ սիրունութիւնով չէ հրաշալի, գեռ պէտք է իմանաս թէ ինչ շնորքներ ունի, որ հիանաս: Այսպէսին ճարելը հեշտ չէ. շտապենք, նշանը տանք, թէ չէ նախանձոտ հարեանները հազար ու մի սուտ կը հնարեն խեղճ աղջկայ վրայ:

— Հաւատալի է, հաւատալի, իշխան, նախանձը շատ բան կ'անի, վրայ բերեց միամիտ թագաւորազը. ահա քեզ նշանը, տուր, վերջացրու:

Իշխանը նշանի հետ շատ սոկի տուեց աղջկայ ծնողներին, յետով հարսնացուին նոր շորեր հագցրած, զարդարած բերին զէն թագաւորի մօտ:

Յօթն օր, եօթր զիշեր հարսանիք ար'ն.  
խնդացին աշխարհովի. նորահարսին եկան շնոր-  
հաւորեցին, անթիւ ընծաներ տուին՝ ոսկի և  
մարդարիտներով գարգարած ու տարած առօք-  
փառօք բաղմեցրին ամենից վերև: Ինքն իրան  
մէջ տռաւ. ինչ չէր տեսել իրանց պատին, հի-  
մի տեսաւ իւր ճակատին:

Ճատերին գուր եկաւ նրա խոնարհ կերպա-  
րանքը. բայց ուր նա, ուր Աղունիկը: «Արեղա-  
կի մօտ լուսինն ինչ է», ասում էին մի քա-  
նիսը, առանց իմանալու որ նորահարսի սրտին  
այդ խօսքերով գաղ են դնում: Ճէն Թագաւորը  
սրտի ուրախութիւնից չէր իմանում ինչ անի.  
Հարսակալ տեսքին ու հասակին նայելով ցըն-  
ծում էր, գառնում կնոջը աչքալոյս տալիս,  
որ Աստուած իրանց միիթարութիւն ուղար-  
կեց:

Թագաւորի հետ ցնծում էր ողջ աշխարհը:



Անցկացաւ մի ամիս, երեք ամիս. քաղցր  
հարսը փոխուեց, գառնացաւ: Պալատում մեծ  
ու փոքր նրան սիրում, գուրգուրում էին, այդ  
բանից երես առաւ, իրուունքներ բանեցրեց և  
սկսեց համարձակ պատստխաններ տալ կերսա-

թին<sup>1)</sup> ու սկեսութին: Նշանակութիւն չտուեց,  
թէ տանը իրանից աւելի մեծը կայ, պահանջեց  
որ ամենն էլ իրան գլուխ վէր բերեն:

Ճէն Թագաւորը ծածուկ թէ աշկարայ շատ  
իրատեց որ հարսին կոտրի, ճամբի բերի, չե-  
ղաւ: Ով նորահարսի գեղեցկութիւնն էր տեսել՝  
առանց բնութեան ծանօթ լինելու երանի էր  
տալիս թագաւորին. «Բազդառնը նրա աչքին,  
որ այնպէս գեղեցիկ ու խոնարհ հարս ճարեց.  
մենք էլ գնանք այսուհետև աղքատների տնե-  
րից հարսնացու ջոկենք»:

Եւ ճշմարիտ. նորահարսը դրաւել ման գա-  
լիս այնպէս ծանը էր կենում, ինչպէս ծով, այն-  
պէս մեղմ էր զրուցում, կարծես անմեղ գառը  
բայց երբ պալատն էր մտնելու, լեզուվ ու արար-  
մունքով այնպէս էր շանթում<sup>2)</sup>, ինչպէս նետ-օձ:

Ազունիկի գեղեցկութիւնը փշի պէս ծա-  
կում էր նրա աչքը: Թագաւորն ու թագուհին  
հարսին շատ համբերեցին. բայց տեսան որ վերջ  
չի լինում նրա ամբարշտութեանը, սկսեցին մտա-  
ծել, մտածելուց սկասրտել ու ցաւի տիրանալ:

Ի՞նչ անէին խեղճերը. ոչ կարելի էր գուրս  
անել, ոչ իրանց ցաւը լոյս աշխարհ հանել: Ճա-  
րահատուած տղին լանդիմանում, երեսատում

<sup>1)</sup> Ակեսը ամուսին. <sup>2)</sup> այրել:

էին, թէ ինչու այս շանթը մեր տուն դցեցիր: Քանի անգամ պատուիրեցինք, որ աղքատ ու հպարտից հեռու կենաս: Այս ինչ սև օձ էր, որ մեր վզով փաթաթեցիր:

— Հայր իմ, ինչ անեմ, լալով պատասխանում էր որդին, ես ինչ մեղ ունիմ: Թրա ընտրութիւնը իշխանն է արել:

Թագաւորը խիստ գառնացած էր. կանչեց, հարցուփորձ արեց, և վերջը երբ տեսաւ որ իշխանն է մեղաւոր, իսկոյն պալատից արտաքսեց ու ինքն էլ մի քանի շաբաթ չքաշեց անկողին ընկաւ: Ֆերութիւնը մի կողմից էր յաղթել, տան խառնակութիւնը միւս կողմից:

Երբ գժուար ժամանակ որդին եկել էր միսիթարելու, հայրն ասաց.

— Որդի, քու միամտութիւնը էժան չնըստեց ինձ, խաբուեցիր կին ընտրելու մէջ և ինձ շուտով գերեզմանի գուռն ուղարկեցիր... Մի՛ լար, նրանից դէնը քո լացն ինձ չի օգնիլ: Բայց լոիր վերջին պատուէրս, թէ ինչ ես անելու: Ինձանից յետոյ աշխարհիս մեծն ու կառավարիչը դու ես: Քեզ խրատել հարկաւոր չի, գոհութիւն Աստուծոյ, խելահաս մարդ ես: Կնկանդ համոզիր, որ մօրդ պատուի, չգշտացնի, նա գոնէ մխիթարուած սրտով գերեզման մտնի: Դիմաւոր հոգսս Աղունիկն է. նրան խնամող-պահպանողը մայրը

կըլինի. Նա ոչ քեզ նեղութիւն կըտայ, ոչ կնկանդ: Իմ հարստութիւնից մի փոքր մասը որ տաս, մինչեւ կեանքի վերջը ապահով կ'ապրի: Յուսով եմ որ հաւատարիմ լինիս իմ պատուէրին: Գուշ զիտես որ ես մեռնում եմ զուոզ կընկանդ երեսից. աշխատիր իշխել նրա վրայ, թէ չէ մօրդ ու քրոջդ զլորելուց յետոյ քեզ էլ հանգիստ չի թողնիլ հօրդ պալատում:

Թագաւորազը լալով մօտեցաւ հօր ձեռները համբուրեց.

— Խոստանում եմ, հայր իմ, պատուէրներդ կատարել ճշուութիւնով:

Ճէն Թագաւորը օրհնեց իրան շուրջը եղողներին, կանչեց թագուհուն, մնաս բարեւ ասաց. ձեռը Աղունիկի գլխին դրեց ու հոգին աւանդեց: Թագաւորազն իսկոյն գնաց կնոջը նախատեց:

— Ինչքան գուոզ արարած ես, որ կերսարդ մեռաւ, մի անգամ ակը տալու չեկար:

Հարսը որ կերսարի մահը լսեց, տեղից վեր թռաւ ու բարձրածայն ճուալով, լալով սգաւորների մէջն ընկաւ առանց երեսին քող ծածկել լու: Ճատերն ասում էին.

— Տեսէք, տեսէք, ինչքան է սիրում կերսարին, որ սրտի կոկծից ամօթը մօռացել է:

Թագաւորազը մեծ փառքով հօր թաղումը կատարեց և Աղունիկի ձեռով ողորմութիւն

բաժանեց տնանկ ու աղքատներին:

Հարսը նոյնպէս սուզ էր պահում տանեցոց հետ. հանդարտ էր, կարծեցին թէ բնութիւնը փոխել է:

Փամանակ անցնելուց յետոյ թագուհին աղջկանն ասաց.

— Աղունիկ, փեսացու ընտրելուդ օրերը մօտենում են. երկար ապրելու յոյս չունիմ, ուզում եմ աչքովս պսակդ տեսնել: Հայրդ վճռել է մի աղքատ ու անուանի տղայ ընտրես, քու բաժինքով նրան բաղդաւորես: Բայց ես մի բան էլ եմ ասում. լաւ կըլինի առաջ քո հասակի աղջկերանց մի քանիսին իրանց մուրագին հասցնես, նրանց մաղթանքն ու նրանց մայրերի օրհնանքն առնես, յետոյ քու ընտրութեան ետնից կենաս: Գանձարանի բանալին հայրդ ինձ է տուել. առ, գնա, ինչքան ուզում ես ոսկի, արծաթ վեր կալ ու քու զիտեցած տեղերը բաժանիր:

Աղունիկը հնազանդ աղջիկ էր, մօր խորհուրդը լսեց ու սկսեց թագէթաղ պարտել, չքաւոր աղքատներին փող բաժանել: Հարսը այս որ իմացաւ, էլի քաջքերը մօտ եկան. կատաղեց ու սկսեց ինքն էլ իրանուզլիսու կարգադրութիւններ անել պալատի մէջ: Մարդը բարկացաւ, Աղունիկի առաջ կնկանը յանդիմանեց.

— Միթէ չես իմանում որ առանց տան մեծից իրաւունք խնդրելու չպէտք է մի բան անել:

Կինը պատասխանեց.

— Այս տան մէջ տարիքով մեծը քու մալրն է, բայց թագուհին ես եմ, իշխանութիւնն իմն է. ուրեմն ինչո՞ւ չեմ կարող անել:

Ո՛քան էլ թագաւորազը համոզում էր, որ չհակառակուի, սկեսութին խոնարհ լինի, կնիկը եքսան<sup>1)</sup> զոռող պատասխաններ էր տալիս.

— Եթէ ձեռներս կապուած պէտք է լինէին աղքատի սէս, մեր տանը կընստէի, էլ ինչո՞ւ էլ թագաւորի տուն հալս գալիս:

Թագուհին հարսի ասածները թէ ականջով էր լսում, թէ Աղունիկի միջոցով, և ցաւի վրայ ցաւ էր աւելանում: Աղջկան ու տղին նայելիս սիրտն ուզում էր փառաւորուի, բայց հարսի արարմունքները միտք բերելով մաշւում, ձէրք էր ընկնում: Ոտի վրայ ման զալ չկարենալով վերջինիքոյ անկողին մտաւ. որդին նրա տը-կարանալու վրայ շատ կոտրուեց, զիտէր որ իւր կնկայ ձեռից է հիւանդացել. սկերես էր մօր մօտ, ուշ-ուշ էր զնում ակը<sup>2)</sup> տալու: Աղունիկին էլ միայն, որ սկասրտած<sup>3)</sup> կանգնած էր

<sup>1)</sup> Աւելի ու աւելի. <sup>2)</sup> այցելել. <sup>3)</sup> տիսուր:

լինում մահման մօտ և գիշեր ցերեկ հսկում էր  
մօրը: Այն ինչ տրաքտրաքուած<sup>1)</sup> հարսը իւր  
տեղը հանգիստ նստած առում էր.

—Թէ ճիշրք սկեսուրս էլ կը մեռնի, ես  
զիտեմ թէ Աղունիկի գլուխն ինչ կըքերեմ:  
Թող ասեն որ նա արեգակ է, իսկ ես նրա կըշ-  
տին լուսին էլ չեմ:

Այսպէս մտածելով ոչ մի անդամ էլ տե-  
սութեան չգնաց: Թագուհին ցաւից յաղթուած  
վերջին շնչումն էր, կանչել տուեց որդուն և  
ասաց.

—Որդի, ինչ որ մինչեւ օրս խնայել եմ քեզ  
ասելու, այսօր յայտնում եմ, որ իմանաս, թէ  
մայրդ ինչ վիրաւոր սրտով է հեռանում աշ-  
խարհից: Ճատ երկար կըլինի որ միառմի պատ-  
մեմ քու կնկայ արարքները: Սարի պէս հայրդ  
նրա ձեռից դարդախեղդ եղաւ, մեռաւ: Եթէ  
մինուճար աղջկանս հոգուր չլինէր, այսքան դա-  
ռն օրերի չէի դիմանալ: Թէպէտ Աղունիկին  
աչքի լուսից աւելի եմ սիրում և կամենում եմ  
բաց աչքով պսակել, որ հօրդ պատուէրը կատա-  
րած լինիմ, բայց կինդ, որդի, նրա գէշ-գէշ  
խուքերը սիրտս փտեցրել են. էլ ապրելու ոյժ  
չկայ: Ես մեռնում եմ և միտքս քեզ յայտնելով

<sup>1)</sup> Ամբարտաւան:

կամենում եմ ամեն մեղք ու վարձք քու վիզը  
զցել: Հայրդ ինձ է յանձնել քրոջդ, որ մուրա-  
գին հասցնեմ: Նրա բաղդից ես տկարացայ,  
ձեռս կարճացաւ. կենդանութեանս օրով չկարո-  
ջացայ նրա ուզած վեսացուն ընտրել: Ես այժմ  
յանձնում եմ քեզ ու խնդրում, որ գու լինիս  
նրա եղբայրը, նրա հայրը և նրա մայրը: Եթէ  
ուզում ես, որ գերեզմանումն էլ քո արեւ օրհ-  
նեմ, Աղունիկին սրտապակաս չժողնես. այսպէս  
պէտք է մտիլ անես, որ չիմանայ թէ որը է:  
Փառք Ստեղծողին, ողորմած հօրիցդ մն սցած  
պաշարներն անհատնում են և գանձերն ան-  
սպառ. համ գուք վայելեցէք, համ նրան տուէք:  
Աղունիկը մեծ պահանջներ անող աղջիկ չի-  
դու պէտք է իմանաս նրա ուզածը: Եթէ կըն-  
կանդ յուսով թողնես, նա ոչ թէ հաց ու շոր  
կըլինայի, այլ նախանձից կըհեռացնի իւր հօր  
պալատից:

Որդին ուշադրութիւնով լսեց մօր խրատն  
ու կտակը, խոստացաւ սրբութիւնով կատարել:  
Թագուհին իւր մօտ կանչեց Աղունիկին, ձեռը  
գլխին դնելով օրհնեց, համբուրեց, եղբօրը յանձ-  
նեց ու արդար շունչը • վիշեց:

Ճէն Թագաւորազը մեծ պատուով թաղեց  
իւր մօրը և սկսեց աշխալիք կառավարելու ետ-  
նից կենալ:



Գ Առաջին առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
Եղբայրը Աղունիկին առաջուց էլ սիրում  
էր, բայց ծնողների մահը և նրանց պատուէր-  
ները եքսան վարարացրին<sup>1)</sup> նրա սէրն ու գը-  
գուանքը: Քրոջը տխուր տեսնելիս, իւր գործնըը  
թողում, մօտը նստում էր, տխրութեան պատ-  
ճառը հարցնում, սրտի ուզելիքն իմանում և իս-  
կոյն կատարում տալիս: Կարծում էր թէ Աղու-  
նիկի տխրութեան պատճառը միայն ծնողների  
մահն է, էլ չէր իմանում, թէ իւր կնիկը ինչ  
չար աչքով է նայում տալի վրայ:

Օր չէր անցնում, որ նախանձ հարսը չնչին  
բանի համար Աղունիկի հետ կռիւ չտայ ու ծանր  
խօսքերով թագաւորին, թագուհուն չհայհոյի:  
Ի հարկէ այս բոլոն անում էր մարդից ծա-  
ծուկ: Ճատ էլ վշտանում էր խեղճ աղջիկը, շատ  
էլ սրտի կուծից քաշում էր իւր սենեակը, աղի-  
աղի լաց լինում, բայց երբէք մոքսվը չէր անց-  
կացնում եղբօրը գանգատուել, վախենում էր դրա-  
նով աւելի կատաղացնի հարսին: Հէնց որ եղբօր  
ոտնաձայնը լսում էր, արտասուքները կուլ էր  
տալիս, լացն ու հեկեկոցը ներս էր անում և

<sup>1)</sup> Առատացրին:

եղբօր առաջ ծիծաղադէմ կանգնում:

Այդպէս ժամանակները հարսը ականջը ծա-  
ծուկ մօտեցնում էր դռան ճեղքին, որ խօսակ-  
ցութիւնն իմանայ: Հաւատացած էր, որ տալը  
եղբօր մօտ լաց կըլինի և իրանից կըգանգա-  
տուի, բայց սպասածի հակառակ լսում էր, որ  
քոյր ու եղբայր իրար հետ խնդում, ծիծաղում  
են: Նախանձից ուզում էր միջից կէս լինի: Երբ  
տեսնում էր որ իւր շանթածով, տուած տան-  
չանքներով տալը կոտրում չի, ուզում էր իւր  
միսն ուտիի. երբ տեսնում էր որ քոյր ու եղբայր  
իւր ցանկութեան հակառակ սէր են անում,  
ինքն իրան մէջ տապակ-տապակ<sup>1)</sup> էր լինում:

— Չէ, այսպէս չի լինի, ասում էր, պէտք  
է սրանց սրտերը բաժանել. այնպէս սառնու-  
թիւն զցել մէջները, որ աչքով աչք չունենան  
իրար նայելու:

Եւ սկսում էր իրար ետնից անվերջ դան-  
գատներ անել Աղունիկից թագաւորագին: Բոլոր  
հնարները զուր էին անցնում. եղբայրը ոչ մի  
զբարատութեան չէր հաւատում: Հարսը իմա-  
նալով իւր մարդու միամտութիւնը, չէր դադա-  
րում գանգատները շարունակելուց:

— Օրական մի քորոցի չափ կասկած աւե-

<sup>1)</sup> Խորովուել:

լանայ եղբօր սղտում, բաւական է, ասում էր  
օձիոր<sup>1)</sup> հարսը:

— Գիտե՞ս ինչ, ասում էր մարդուն. քո քոյրը  
տնաղ<sup>2)</sup> է անում ամենի մօտ, որ ես աղ-  
քատի տանից եմ եկած:

— Գիտե՞ս, քու երեսպարզ քոյրդ ինչ է ա-  
սել. սրա-նրա մօտ ասել է, որ իմ խօսքը պա-  
լատական իշխանի հետ է, որ ես քեզ անհա-  
ւատարիմ եմ:

Վրայ երրորդ օրն էլ ասում էր.

— Գիտե՞ս ինչ. քու պրճոկուած<sup>3)</sup> քոյրը  
ասել է, թէ եղալրս է մեղաւոր, որ ծնողներս  
դարդախեղդ եղան, իրար ետնից մեռան:

Սրանց պէս հարիւր բան ինքն իրան հնա-  
րում, թագաւորազի ականջն էր հալում: Եղ-  
բայրը բնութիւնով հանդարտ էր, չէր բարկա-  
նում քրոջ վրայ, բայց թւում էր, թէ տասը  
սուտից մինը ճշմարտի տեղ էր ընդունում և  
իւր մէջ վշտանում: Քրոջ սիրտը չկոտրելու հա-  
մար կնկանն էր սաստում, որ ձեռ վերցնի նր-  
բանից: Բայց հարսը տեսնում էր որ ամուսինը  
աչքի տուկով է նայում Աղունիկին. ուրախանում  
էր որ իւր չար գիտաւորութիւնը յաջողութիւն  
է գտնում և եքսան սիրտ էր առնում և ծանր

<sup>1)</sup> Նախանձոտ. <sup>2)</sup> Ճաղբել. <sup>3)</sup> Քրքրուած:

զրպարտութիւններ սարքում տալի վրայ.

— Գիտե՞ս քո նախանձ քոյրն ինչ է ա-  
սում: Ասում է թէ՝ վայ իմ օրին, որբ եմ մը-  
նացել. ծնողներս գուր տեղը եղբօրս յուսով թո-  
ղին, նա օտարի աչքով է նայում ինձ: Անտէր-ան-  
տիրական աղջիկները ինձնից լաւ վիճակի մէջ  
են. եթէ չամաչեմ, կը հեռանամ հօրս տանից,  
որ ոչ եղբօր երես տեսնեմ, ոչ հարսի:

— Տեսնում ես ինչ ապերախտ պտուղ է քո  
քոյրը: Ափսոս քո աշխատանք: Ասենք թէ ես  
նրա համար վատ եմ, օտար եմ, գու խօ լսւ  
ես, քո ջանն ու հոգին խօ նրա համար գնում  
է, տասը մատդ նրա համար ճրադի տեղ վա-  
ռած ես պահում, քեզ ինչու է վատարանում,  
սրա-նրա մօտ բամբասում: Ես ու իմ հոգին, ինչ  
էլ ասի քեզ, արժան է, որովհետեւ միամիտ ես  
ու չես իմանում թէ ովէ քո չարակամն ու բա-  
րեկամը:

Թագաւորազը ոչինչ չէր պատասխանում,  
միայն ունքերը կիտում էր ու առանձնանալով  
մտքի մէջ ընկնում: Հարսը եքսան սիրտ առ-  
նելով ասում էր.

— Ուխայ, բանս յաջողուում է. յոյս ունիմ  
այնպէս անեմ, հօր տանից տկլոր գուրս գայ:  
Թող այն ժամանակ պարծենալ, որ ինքը ին-  
ձանից սիրուն է. տեսնեմ ովէ է այն աղքատ

տղէն, որ լիմարի նման յօժարւում է դար ու դարդակ աղջկանն ուզում: Տեսնենք տնազատեղը ես կըլինիմ թէ Աղունիկը:

Աղունիկը չգիտէր թէ հարսը իրանից բամբասանքներ է անում. միայն այն էր զարմանում, թէ ինչու եղբայրը իրան ուշ-ուշ է այցելում կամ հանդիպած ժամանակ երեսը շուռտալիս: Գնում էր եղբօր մօտ, որ վիշտը յայտնիքաց քանի գնում էր, հարսն այնտեղ էր լինում: Ամօթից ու վախից կամ ոչինչ չէր խօսում կամ անմեղ պատճառ տալով դուրս էր դալիս:

— Այս լաւ առիթ է, մտածում էր հարսը, երբ սա շուտ-շուտ եղբօր մօտ է գալիս, անշուշտ մտքում մի բան կայ: Լաւ, թող սպասի, տեսնի գլուխն ինչ եմ բերում:

Հինումին շորեր իրար մօտ հաւաքեց, վառեց, ծուխումխով տունը լցրեց, յետոյ ճուալով դուրս փախաւ.

— Վայ օգնեցէք, շորերս կրակը լափեց:

Դրառաները վագեցին և ուզեցին կխճոր<sup>1)</sup> տալ հանգել կառ<sup>2)</sup> ընկած շորերը, բաց հարսն արգելեց վիները ծղրտալով.

— Թողէք թագաւորը դայ և իւր աչքով տեսնի, թէ քոյրը, անզգամ քոյրը ոնց է կրակը

<sup>1)</sup> Կոխտեել. <sup>2)</sup> Վառուած:

դրել շորերիս միջին ու իւր սենեակում անմեղ ձեացել:

Դրառաները հեռացան թէ չէ, էլի հնմաշ շորեր ածեց կրակի վրայ: Թագաւորազը պալատը մտաւ, կինը մրկած ու այրուած շորերի վրայ ձեռը մեկնելով ասաց.

— Ի՞նչ պատուհաս էր քոյրդ, որ ծնողներդ թողին. լաւ պտուղ էր, շատ էին սիրում, հետները կրտանէին, էլ ինչ էին ջանիս համար ցաւ թողում: Արած բամբասանքները բաւական չէին, այսօր էլ շորերս է կրակի բերան տուել: «Եղբայրս իւր կնկայ համար երկ-երկու է առնում շորը, իսկ ինձ համար մինն էլ չի առնում. ես էլ այսպէս կ'այրեմ», ասում է քու քոյրը: Բա էս համբերելու բան է: Էդուց էլ ով գիտէ ինչ փորձանքներ բերի գլխներիս: Արապէս անամօթ-ապերախտին վաղուց էր հարկաւոր տանից վունդելը, բաց դու պատուած ու պաշտած ես պահում, ի հարկէ նա էլ քեղպէսի լաւութիւնը այսպէս կրգարի:

Ճէն Թագաւորազը անխօս գնաց քրոջ մօտ. տեսաւ աղիողորմ լալիս է ու արտասուքը կարկտի պէս աչքերից թափում.

— Ա՞խ, մայր իմ, ասում էր, ինչու որբ թողիր ինձ, ինչու հետդ գերեղման չտարար: Այս ինչ դառն օրեր է, որ քաշում եմ հօրս տանը:

Եղբայրը գթաշարժուեց նրա լացի վրայ։  
մօտեցաւ, ասաց.

—Հանդարտուիր, քոյր իմ, ո՞վ է քեզ վըշ-  
տացրել։ Ի՞նչ անենք որ երկու կտոր շոր է այ-  
լուուել։ Նորը կ'առնեմ, դարդ մի անիլ։ Դու խօ  
մեղաւոր չես, ինչու ես սրտի դալիս. բաւական  
ժամանակ է քեզ մօտ չեմ եկել, կարելի է զրա  
համար ես նեղացել։ Ես քեզ մօտ մեղաւոր եմ,  
քոյրիկ, ներիր ու համարձակ առաջ վիշտ։ Ո՞նց  
տեսնում եմ հարսիցդ ես վշտացած։ Ի՞նչ ունիս  
նրա դէմ, ասա՛:

Աղունիկը պատասխանելու տեղը լացը շա-  
րունակեց, որովհետև չգիտէր հարսի արած դէ-  
շութիւններից ո՞րն առի և ո՞րը թողի։

—Մի քաշուիլ, ասա՛, կրկնեց եղբայրը ձե-  
ռը քրոջ վրավ գցելով. հարսդ քեզ վրայ անժիւ  
բաներ է ասում, ինչու չես ջրում, կասկածները  
քեզանից հեռացնում։ Կարելի է վախենում ես:  
Ո՞ւմնից։

—Բացի Աստըծուց, ես ոչովից չեմ վա-  
խենում, եղբայրս, ասաց քոյրը։ Բայց հաւատա-  
Աստըծուն, որ ես ոչ մի բանից տեղեկութիւն  
չունիմ. ինչ ասում է հարսս, բոլորն իրան սար-  
քած է։

—Ամենից շատ ուրախացողը ես կըլինիմ,  
քոյրիկ, երանի բոլորը սուտ լինէին։ Հանգիստ

կաց, հարսը չի կարող քեզ ոչինչ անել. այսու-  
հետև նրա հետ ոչ մի գործ էլ մի ունենալ։

Քոյր ու եղբայր խօսելիս, հարսը մարող<sup>1)</sup>  
կացած լսում էր ու իւր մէջը փրփրում, կատա-  
զում—ախ, ինչպէս հանդարտ է խօսում քրոջ  
հետ։ Էլի մտերմացան, ինչ անեմ որ բաժանեմ  
և վերջնական բաժանեմ։

Ունքերը կիտած, զլխակախ մտածում էր  
որ հնար գտնի։ Սրտի չարութիւնից աշխարհը  
մտէն ընկել էր, ինչ թէ կաթնակեր մանուկը,  
որ օրօրցում վրչում<sup>2)</sup> էր անծիծ և անփոփ<sup>3)</sup>։

Ուտել-խմելը մոռացած, զունատուած ման  
էր զալիս սենեակէ սենեակ առանց դադ արելու  
ֆառաները վաղուց էին սկսել զգուել, սարսա-  
լիել նրա դէմքից ու աչքերից։ Աղունիկը խօ  
շաբաթներով նրա երեսը չէր գուրս զալիս, փա-  
կուած էր իւր սենեակում։ ճաշն էլ այնտեղ էր  
ուտում։

Ճէն Թագաւորազը քրոջ բաժինքի պատ-  
րաստութեան ետնից էր։ Աղունիկը անհամբեր  
սպասում էր եղբօր առաջարկին, որ փեսայ ընտ-  
րէր ու գնար իւր արեւի ձէնն ածէր։ Զար հարսը

<sup>1)</sup> Թագնուած, ականջը սրած. <sup>2)</sup> լալիս. <sup>3)</sup> անկե-  
րակուր։

Հենց մի առիթ էր փնտրում, որ Աղունիկի վը-  
րայ բամբասի:

—Տեսնում ես, ինչքան հպարտացել է  
քոյրդ, ասում էր մարդուն. նշանուելու օրերը  
մօտեցել են, գլուխը վեր չի ունում մեզ մօտ  
ճաշի գայ:

Մարդու մօտից հեռանալով ինքն իբան  
ասում էր.

—Սպասիր, ամբարտաւան աղջիկ, քանի  
այս շունչը վրէս է, չեմ թողնիլ մուրազիդ հաս-  
նես: Ոնց որ հօրն ու մօրդ գառնացած սրտով  
գերեզման լիշեցրի, քեզ էլ արիւն արտասուքով  
պալատից կը վունդեմ: Բաժինքի տեղ ծեղ չեմ տալ  
աչքդ կոխես: Սպասիր, միամիտ Աղունիկ, ես  
մեռած պէտք է լինիմ, որ դու տշխալհում օր  
տեսնես:

Դ

Մի իրիկնադէմ չար հարսը կատաղած ինքն  
իբան խօսում էր.

—Մինչեւ օրս բոլոր հնարները գուր անցկա-  
ցան, բայց միթէ էլ հնար չկայ և այնպիսի  
հնար, որ թագաւորազի սիրտը տակից մղկը-  
տացնի: Ես մինչեւ իմ մարդուն թունդ կսկի ծի

չանդիպեցնեմ, նա իւր պաշտած քրոջից ոչ  
ձեռ կը վերցնի, ոչ պալատից կը վոնդի: 2է, սրբ-  
տիս փափազը պէտք է կատարեմ, ինչ գնով  
էլ լինի, միայն թէ Աղունիկին, իմ աչքի փու-  
շին կործանեմ, օրը խաւարացնեմ, որ մարդիկ  
չասեն թէ՝ նա արեգակ է, ես լուսին:

Գլշեր ժամանակ ամեն ինչ խաղաղ էր,  
պալատում ամենքը քնած. չար հարսն էր, որ  
գև կտրած անքուն էր: Անկողնից զգոյշ վեր  
կացաւ, մօտեցաւ օրօղոցին, մանուկի գլուխը ձախ  
ձեռով բարձրացրեց, աջ թևում պահած դա-  
նակը մեկնեց, մի ակնթարթում երեխին մոր-  
թեց: Արիւնոտ դանակը զգոյշ ու կամաց տա-  
րաւ միւս սենեակը Աղունիկի գրպանը դրեց, հե-  
տը-հետին<sup>1)</sup> դարձաւ օրօղոցի մօտ ու բարձր,  
կատաղի ձայնով ճուաց:

Թագաւորազը ճուացի վրայ զարթնեց ու  
մնաց սարսափած: Զգիտէր, կնիկն ինչո՞ւ է  
ծփում, ծկլթում, ուզում էր հանդարտ հարցնի  
պատճառը, որ յանկարծ կնիկը խօսքը բերանից  
իւլեց.

—Ըհը՝, այս էլ քու ոչուփուչ<sup>2)</sup> քոյրը, ձեռը  
մեկնեց օրօղոցի վրայ. որ ասում էի այդ ան-  
զգամին տանից վունդիր, սրա համար էի ասում:

<sup>1)</sup> Խոկոյն. <sup>2)</sup> Փուչ կենդանի:

Օրօրոցը թեքեց, արիւնշաղախ մանուկին ցոլց տուեց ու սուտ հեկեկոցն սկսեց.

— Այս Աստուած կրվերցնի՛, ես կսկծից մղկրտամ, մարդասպան քոլրդ իւր համար հանգիստ խորմփալ: Ել ասելու էս, թէ քոլրս այդպէս բաներ անող չի... չու, հու, հու, սուտ լալով սկսեց ծնկները ծեծել: Թագաւորազը, որ մորթուած մանուկին տեսնելով մնացել էր քարացած, երբ նկատեց որ էլի իւր քրոջն է մեղադրում, կընկան ասաց.

— Ա'յր ինչով ես իմանում որ նա է արել. ինչու ես հոգիդ ալրում, չոր փայտին արիւն քում: Ասենք քոլրս չի, ստարի մէկն է, հէնց պէտք է զուր խօսելով միշտ կրակում պահէս: Զէ որ նրան էլ Աստուած է ստեղծել: Նրա մասին էլ ինձնից հաշիւ կրպահանջուի: Ինչու չես վերջ տալիս նախանձիդ: Ես էլ եմ տենում որ մի անիրաւութիւն է արուած, հատիկ որդիս մորթուած է, աշխատենք յանցաւորը գտնենք, ոչ թէ անմեղին կրակը դնենք: Քոլրս խօ լիմարացել, միսը չի կերել<sup>1)</sup>, որ այդպէս բան անի: Քոլր չէ որ, աչքիս լոյսը լինի՝ արդար դատաստան անելուց ետ չեմ կենալ:

— Ո՞վ կըթողնի, որ ետ կենաս. ո՞վ իրան

<sup>1)</sup> Գժուել:

որդուց հեշտութիւնով ձեռ կրվերցնի: Ալդքան որ պաշտպանում ես քրոջդ, ասաց կինը, ձեռիդ մէջից հոտ ես կալել, որ նա արդար է:

— Հապա դու ձեռիդ մէջից հոտ ես կալել որ նա է մեղաւորը: Ինչով ես իմանում որ նա է սպանել:

— Հալբաթ նրա հոգին ճանանչում եմ, որ ասում եմ. թէ չէ զուր խօսելը ես չեմ գիտում, որ Աստրծու զէմ է: Ալզում ես կանչիլ քու ծակծակուուած<sup>1)</sup> քրոջը, հարցուփորձ արա, հէնց խօսալուց կերևայ:

— Այստեղ ուր կանչենք, գնանք իրան մօտ, ասաց թագաւորազը և կնկայ հետ մտաւ Աղունիկի ննջարանը: Աղջիկը հրեշտակի պէս խաղաղ քնած էր. եղբայրը վրդովուած սրտով «Աղունիկ» կանչեց. քոլրը շարժուեց, անկողնում նստեց, սկսեց աչքերը հաղաղել որ քաղցը քունը փախցնի: Հարսը ետնից ներս մտնելով ժամանակ չտուեց որ եղբայրը երկրորդ անգամ կանչի. կատաղած յարձակուեց Աղունիկի վրայ և քնելակին<sup>2)</sup> դմբուզով<sup>3)</sup> շրըմփացնելով<sup>4)</sup> ճղղայ.

— Տես, ոնց է սուտ քուն մտել, պրճոկուած-սեսըուզով:

<sup>1)</sup> Ռակծկուած, գնդականար եղած. <sup>2)</sup> Քունք.

<sup>3)</sup> Կրոռուկ. <sup>4)</sup> ուժգին խիել:

Պինչև խեղճ աղջիկը վեր կըլթռչէր գըմ-  
բուզի սաստիկ ցաւից, Հարսը ձեռը մեկնեց ու  
նրա շորի զրպանից արիւնոտ դանակը հանեց.

—Ես որ ասում էի, չէիր հաւատում. Հի-  
մի քոյրդ է թէ չէ: Ել կ'ասես թէ չոր փայ-  
տին արիւն եմ քսում: Փառք Աստուծոյ, նշանը  
գտնուեց:

Թագաւորազը մնաց փէտացած, կանդնած.  
աչքի տեսաձին չէր հաւատում:

—Ի՞նչ ես լռուել, ասաց մարդուն, էլի մը-  
տածում ես քրօջդ պաշտպանե՞ս: Զէ, Հնար  
չկայ, մտածելու ժամանակն անցկացաւ. որդի եմ  
կորցրել, այս բոպէիս որդուս արիւնը տո՞ր:

Այս ասելով տալին քաշքշելով բերեց օրօ-  
րոցի մօտ: Աղունիկը երբ արիւնոտ դանակը իւր  
դրպանից հանելիս տեսաւ, այժմ էլ արիւն շա-  
ղախ մանուկին, սարսափից մնաց ծմրանը կտրած,  
պապանձուած: Խելքը կորցրածի նման մէկ դա-  
նակին էր նայում, մէկ օրօրոցին:

Հարսը ընդհակառակը մի բոպէ չէր լռում,  
անդադար գոռում էր, Աղունիկի վրայ մեղա-  
դրանքներ դնում և պահանջում.

—Ինչպէս դա որդուս մորթել է ու սիրոս  
խորովել, դրան էլ պէտք է մորթես աչքիս ա-  
ռաջ, սիրոս հովանայ, թէ չէ ձեռ վերցնողը  
չեմ:

Թագաւորազը տեսնում էր որ այս ամենի  
դէմ քոյրը լռում է, եքսան էր տիրում: Դրա-  
նից եղրակացնում էր որ ուղիղ նրա արածն է.  
չէր ուզում երես երեսի հետը խօսել. շուռ եկաւ.  
ու ասաց.

—Այ դու, քարասիրտ, եթէ Հարսիդ չէիր  
խղճում, գոնէ ինձ խղճակիր, որ քեզ զլխիս  
հաւասար սիրում էի: Խղճմտանքիդ ինչ էիր  
ասում, որ անմեղ մանուկին անողորմաբար սուրն  
էիր քաշում:

Աղունիկը պանզէ պուռնդ լցուած ամանի  
պէս եզրօր ալդ խօսքերի վրայ սկսեց թնդթրն-  
գալ, հեկեկալ, աչքերից աղե-աղի վեր ածել<sup>1)</sup>  
և հետն էլ լալով ասել.

—Հաւատա՛ Աստրծուն, Եղբայր, ես չեմ  
մորթել քու որդուն: Ես ո՞նց կարող էի այդ  
անել, երբ նրան ինքս էլ սիրում, փայփայում  
էի: Ես այդպէս անդութ բան չէի կարող մը-  
տածել: Անմեղ եմ, խղճա ինձ, եղբայր, մի հա-  
ւատալ, որ քոյրդ կարող է անմեղ մանուկի վը-  
րայ սուր բարձրացնել: Կինդ նախանձից ինձ  
հետ թշնամի է, նրա խօսքին մի լսիլ:

—Եթէ դու անմեղ ես, Հարցրեց եղբայր,

<sup>1)</sup> Պառնապին արտասուել:

Հապա արիւնուտ դանակը քու զրպանում ի՞նչ էր  
շինում:

— Հա, այդ հարցըու է, վրայ բերեց հարսը:

— Աստղծուն հաւատա, եղբայր. մանուկին  
մատով չեմ գիպել, ի՞նչ թէ դանակով: Չեմ էլ  
իմանում ով է դրել զրպանս:

— Հապա ով է մորթել, կատաղածի պէս  
յարձակում էր հարսը. պալատի մէջ բացի քեզա-  
նից մենք երկուս ենք: Փու ասելով դուրս է դալիս  
որ մանուկին կամ ես պէտք է սպանած լինիմ կամ  
սա: Դի՛ տեսնո՞ւմ ես անդգամ քոյրդ մին-  
չե ուր է հասցնում իւր լրբութիւնը: Համար-  
ձակում է մտքովն անցկացնել, որ մեր մա-  
նուկին մենք մորթած կրթինք: Բաւական է,  
էլ համբերութիւն չունիմ, եթէ դու քու քրոջը  
չես պատժիլ ինչպէս արժանն է, նշանակում է,  
կողմնապահ ես, մարդասպանի պաշտպան ես.  
Քու պալատումը մի օր չեմ կենալ:

Թագաւորադը մնացել էր երկու կրակի մէջ.  
Էլը իմանում քրոջ աղաչանքներին լսի, թէ կը-  
կայ սպառնալիքներին. կնկանից անցկենայ, թէ  
քրոջից: Կնիկը պահանջում էր, որ եղբայրը քը-  
րոջն անպատճառ մորթի:

Աղունիկը այս լսելով այնպէս էր մղկում,  
այնպէս զըուին ու արևը վեր թակում, որ լեռ-  
քարերն անդամ կըխսրուէին: Եղբայրն ուզում

էր քրոջը պաշտպանի, բայց վախենում էր կնկա-  
նից, որ ժողովրդի առաջ անունը չկոտրի: Արիւ-  
նուտ նշանն էլ ծածկել չէր լինիլ: Իւր մէջ վըճ-  
ում է որ քոյրը պատժուի, որովհետև ինքն  
էլ իրեւ հայր ցաւում էր իւր կորած որդու վրայ:  
Կնկայ պահանջը խիստ էր գտնում, ուզում էր  
իւր աշխարհի օրէնքի համաձայն դանակը ըըռ-  
նող ձեռը կտրել ու թողնել:

Այս վճիռը որ Աղունիկը լսեց, զարհուրը  
ջանն առած այնպէս ծղրտաց ու մարդիկ կան-  
չեց, որ կ'ասես լերդն ու թոքը բերանով դուրս  
եկաւ:

— Ա՛խ, մայրիկ ջան, աչքդ բայց արա, գե-  
րեզմանից տես, ի՞նչպէս է չարչարում ինձ եղ-  
բայրս: Դու սրան պահ տուիր, որ ինձ մեծա-  
ցնի, մուրազիս հասցնի, հիմի այնքան քարա-  
սիրտ է դառել, որ կնկայ խօսքով ուզում է  
ձեռս տակից կտրել: Ա՛խ, մայրիկ ջան, միթէ  
դու չգիտես, որ ես անմեղ եմ: Միթէ եղբայրն  
այսքան անգութ կրինի, որ հատիկ քրոջ քամ-  
քաղդութիւնն ուզենայ:

Մինչեւ որ Աղունիկն այսպէս լալով իւր  
հանգուցեալ մօր հետ էր խօսում, մազերը պո-  
կում, ծնկները ջարդում, չար հարսն անգոհ  
մնալով աթուսնու արած վճռից գոռում էր.

— Թագաւոր, հէնց իմացիր, ես կինդ չեմ,

օտարի մէկն եմ. քոյրդ որդուս սպանել է, պահանջում եմ քեզանից՝ կամ որդիս կենդանացրու կամ արիւնի փոխը տուր:

Թագաւորազը դատաստանը գցեց հետևեալ օրը և հրամայեց որ բոլոր պալատականները մերկայ լինին: Ավ լսեց այդ բանը, ափսոսաց աղջկա վրայ. շատերը հաւատացած էին, որ եղայրը վերջին ըովէում կըների քրոջը, կամ ամենամեծ պատիժն այն կրտայ, որ պալատից դուքս կ'անի: Դա մեծ ցաւ չէր լինիլ. Աղունիկն այնքան գեղեցիկ էր, որ նրան ամեն մի երիտասարդ առանց բաժինքի կ'ուզէր:

Դեռ լոյսը չբացուած հրապարակը մարդկանցով լիքն էր: Հաւաքուեցին մեծամեծները, երեաց թագաւորազը տրտում երեսով: Դահիճները բերին Աղունիկին սև շոր հագցրած: Երկու ձեռն էլ իրար մօտ կապկպած էր: Հանդիսական կնիկ ու աղջիկներ՝ ամենն էլ նրան այդ օրում տեսնելիս լաց եղան:

Հարսը նետօձի պէս սուտ օղիկ-մօղիկ էր դալիս, գլխին վայ տալիս, կանչում.

— Թագաւոր, կամ որդիս կենդանացրու կամ արիւնի փոխը տուր:

Աղունիկը շատ լայտց ուժասպառ էր եղել. սրտի կսկծից ձայնը խղուել, թուկացել էր, ոյժ չունէր խնդրելու կամ իրան արդարացնելու:

Նրա համար մեծամեծներից շատերը բարեխօսեցին, բայց եղբայրը քարասրտած ոչովի խնդիր չէր լսում: Մի ձայնի ասում էր.

— Ես արդարութեան ծառան եմ: Երդարութիւնը պահանջում է մեղաւորին պատժել: Այս գէպքում մեղաւորը իմ քոյրն է, որովհետև նրա մօտ է գտնուել դանակը: Սրբարութիւնից չեմ կարող անցկենալ, յանցաւորը պէտք է պատժուի — այս է վճիռս:

Ամենն էլ լոեցին: Դահիճներից երկուսը կոճղը բերին և սկսեցին գետնի վրայ ամրացնել, որ ձեռները վրէն կտրեն: Դահիճի մինն էլ կացինն էր սրում:

Աղունիկը աչքերը երկինք բարձրացրեց ու ասաց.

— Ո՞խ, Աստուած, ես ինչ եմ արել, որ ինձ պատժել ես տալիս: Ձեւ որ ձէն Թագաւորը բարութիւն ու ողորմութիւն տալիս իմ ձեռովն էր բաժանում. մայրս նոյնակս՝ աղքատի, տնանկի իմ ձեռով էր օգնում, որ ես սովորիմ քեզ հաճելի բաները և նրանց ճամբովը զնամ: Նրանց մահից յետոյ, արարիչ Աստուած, Քեզ յայտնի է, թէ ինչպէս եմ կատարել նրանց պատուէրները, բարի խրատները: Միթէ այս պատուհան է իմ վարձատրութիւնը: Մի եղանքը ունիմ, Աստուած իմ, նա պէտք է ինձ

անմեղիս պաշտպանի, ինձանից փորձանքները հեռացնի, բայց իմ լաց ու կոծը նրա սրտին չեն ազդում. նա ինձ համար օտարացել է: Ել ոչով չունիմ բացի քեզանից, Աստուած, Քու փէշն եմ բռնել, Դու ինձ անօդնական չկորցնես...

Դեռ խօսքը չէր վերջացրել, դահիճները թագաւորագի հրամանով մօտեցան Աղունիկին, բռնեցին որ բերեն կոճղի մօտ:

Աղջիկը ծփաց, կապկապած կռներով ուղեց ընդդիմանալ դահիճներին, բայց թագաւորագը յանկարծ գոռաց կատաղած դէմքով.

— Քեզ հրամայում են առանց ընդդիմութեան գնաս, թէ չէ տեսնում ես կացինը, վզիդ կըդնեն:

Այս սպառնալիքի վրայ Աղունիկի կռները բոշացան, երկիւղից սրտի մէջ արիւնը թան դառաւ: Հնազանդուեց անձայն, դահիճները տարան կոճղի մօտ:

Կատաղութիւնից թագաւորագի երեսին գոյն չկար. կացինն ինքը առաւ: Աղունիկի աչքերը կապած էր: Կացինը պսպղաց, երկու փափլիկ բագուկները թուչելով ընկան չար հարսի ստների առաջ:

— Տարէք, հեռացրէք, հրամայեց եղբայրը. այլևս դրա երեսը չտեսնեմ: Դրան տուն ու օթևան տուողը դառը մահով կըմեռնի: Թողէք դաշտե-

րում այնքան թափառի, որ սովամահ լինելով գազանների կեր լինի:

Սղունիկը ուշագնայ էր եղել, երեսին ջուր տալով ետ բերին. դահիճները չթողին, ոչ ոք հետը խօսի, առանց պաշարի, առանց կարգին հագուստի արիւնլուկի թևերով տարան քաղաքից դուրս:

Ովքեր ճանաչում էին, խղճում էին, ովքեր չէ, նզովում էին: Խսկ մանուկները քարերով հալածելով քշեցին Սղունիկին շատ հեռու:

Հարսն այս բանից յետոյ քաշուեց իւր սենեակը: Փափագը կատարուել էր. սկսեց գեկի պէս ուրախանալ և ամուսնուց ծածուկ թռչկոտալ, պար դալ:

## ՚

Դահիճներից մինը երկար տեղ հետևեց Աղունիկին. նա խղճում էր նրան: Երբ էլ ոչ ոք չկար, խնդրեց Աղունիկին որ կանդնի. արիւնը կտրելու համար փոշի ցանեց, յետոյ իւր շորերից մինը պատուտեց, փաթաթեց կռներն ու ինքը գարձաւ տխուր-տրտում:

Աստուած լինի Աղունիկի հետ, վերջին անգամ ետ նայեց այն քաղաքին, ուր ինքը ծնուել,

մեծացել էր: Դնողները մտաբերելով լաց եղաւ. եղօրն ու հարսին լիշելով՝ դառնութիւնով երեսը շուռ տուեց: Կտրուած թևերը փէշութ փաթաթած առաջ ընթացաւ:

Գնում էր, բայց չէր իմանում ուր է գրգում: Քանի որ ուժ կար առանց հանգստանալու գնաց, արևը մայր մտնելիս երբ լոգնութիւն գլաց, կանգնեց:

Առջևը տարածում էր մի անսահման դաշտ, ինքը մէջը միախակ: Սիրտն ու աչքերը արտապուքով լցրած դարձաւ երկնքին ու ասաց.

— Որարիչ Աստուած, խօ Քեզ յայտնի է իմ սրբարութիւնը: Եթէ մազի չափ մեղաւոր եմ կունես կտրուելու մէջ, աղաչում եմ, երկնքի՝ կոչտակն ինձնից չինայես: Թող յանկարծամահ լինիմ, երկրի վրայ Քու աչքին չերևամ: Իսկ եթէ արդար եմ, Դու ինձ չկորցնես: Ապաւէնս Քեզ եմ զցի, Աստուած. այնքան շունչս վրէս պլահիս, որ ճշմարտութիւնն երևայ, եղբայրս իւր արած սխալը զղջայ և նախանձոտ հարսս իւր արժանի պատիժն ստանայ:

Նիշերը վրայ էր համնում, Ազգւնիկն անհանգիստ էր, առաջին անգամ էր որ բացօթեալ պէտք է զիշերէր առանց ծածկոցի, առանց փորցի: Կոնկըն այնքան էին ցաւում, կսկծում, որ ահն ու մահը մտից ընկել էր: Տեսաւ ոք

Հնար չկայ, թևերը չմրսացնելու համար տաք աւազի մէջ թաղեց մինչև ուսերն ու բերանս-իվեր պառկած մտածեց, մտածեց, նղղեց<sup>1)</sup> ու քննեց:

Առաւոտն այն ժամանակ աչքերը բաց արեց, երբ արևն ընկել էր թիկունքին, տաքացնում էր: Վերկացաւ ու թափառելով շարունակեց գնալ: Ադամորդու չէր ուզում երևալ, ամաչում էր: Հենց որ շնչաւորի գլուխ էր տեսնում, կամ բոյսերի ետևն էր թագնւում կամ քարերի:

Ճատ ու քիչ գնալն Աստուած գիտէ, միայն օրեր ու շաբաթներ անցնելուց յետոյ թևերի կտրուած տեղերը սկսել էին ծածկուել մսով:

Գէսուդէն թափառելուց յետոյ մօտեցաւ մի շինութեան: Դա ջրաղաց էր, առջևն ընդարձակ բռստան, շրջապատած բարձր ցանկով, ցանկերի տակ մեծ-մեծ ժախուններ<sup>2)</sup> բաժան: Աղունիկը մի կերպ մտաւ այդ բռստանը և թագուն տեղ պատսպարուեց:

Իւր պատսպարանից տեսնում էր ջրաղաց-պանին և եկող-գնացողին, բայց ինքն ոչովի չէր երևում: Յերեկով տեղից չէր շարժւում. արևակատիկի գլուխը գոզը գրած էր, երբ ուզում էր

<sup>1)</sup> Թուլանալ, քնել. <sup>2)</sup> անպէտք բոյս:

հացի ճոթի պէս տանում էր բերանը, ատամ-ներով պոկում:

Երբ որ մութն ընկնում էր, Սղունիկը պա-Հուած տեղից կամաց-կամաց դուրս էր գալիս, մտնում բոստանը: Մատներ չունէր, որ ձմերուկը, սեխը բռնէր կտրէր կամ կոտրէր, խեղճը ճա-րահատեալ բերանսիվեր ընկնում էր ու կրի-այի պէս կրծոտում: Երկար ժամանակ այսպէս զգոյշ մտնում էր բոստանը, կրծելով կշտանում և առանց նկատուելու հետանում իւր պատրս-պարանը: Ջրաղացպանը բոստանը լուսով ման գալիս նկատել էր, որ սեխ-ձմերուկը այստեղ-այնտեղ կիսով չափ կերած, կրծկուրծած թո-ղած է: Մի քանի գիշեր անքուն պահպանու-թիւն արեց, որ իմանալ անողը կրիմ է թէ նա-պաստակ, բայց ոչ սողունի պատահեց, ոչ ա-նասունի: Ընկաւ մտածմունքի մէջ, չէր իմա-նում ինչ պատասխան տալ իւր տիրոջը: Տէրը Զէն Թօագաւորի տղէն էր, որ նրա վատ բաղդից այդ օր հորս էր եկել ջրաղացի մօտ:

Գնաց վախվախելով իմաց արեց.

— Թօագաւորացն ապրած կենաց. բա չես ասիլ, բոստանին այսպէս, այսպէս վնաս է հաս-նում: Ճատ եմ աշխատել անողին բռնեմ, չի յաջողուել: Չեմ իմանում ինչ բան է, ինչ հան-գի զազան է, որ ճանկ չի ընկնում:

Թօագաւորազը, որ երկելի հորսկան էր, ու-շաղիր լսելուց յետոյ պատասխանեց.

— Դու միամիտ քու գործին գնա, ջրաղա-ցիդ հետևի, հիմի ես կրզնամ, տեսնեմ ոնց է ազատում բոստանիս գողը:

Նետ ու աղեղն առաւ, մտաւ բոստանը, յարմար տեղ թագնուեց և աղեղի վրայ նետը սարած պահեց: Մինչև պինդ մթնելը սպասեց. բան չերեաց:

Ասաց. — սպասեմ, կարելի է գիշերը լոյս ընկնի, ով որ է:

Սպասեց. մէկ էլ տեսաւ կէս գիշերին մի ադամորդու պատկեր շարժուեց բոստանի ծայ-րում: Զգոյշ ու կամաց առաջ եկաւ. երբ հասաւ լաւ ձմերուկի մօտ, երեսի վրայ ընկաւ և ազահաբար կրծոտեց: Զէն Թօագաւորազը քիչ համբերելուց յետոյ դէպի նա ծղրտաց.

— Էհէյ, ով ես, շուտ ձայն հանիր, թէ չողիդ թռաւ:

— Ադամորդի եմ, մեղք արի, եղաւ ծղրտո-ցի պատասխանը:

— Ի՞նչ ադամորդի ես, շուտ ասա, թէ չէ...

— Աղջիկ եմ, աղջիկ, գիշերուայ լուութեան մէջ լսուեց մի բարակ ձայն:

— Առաջ արի, ինչ աղջիկ ես, խիստ ձայ-նով խօսեց թօագաւորազը:

— Զեմ կարող, մերկ եմ:

Դաշտում ու ձնորում երկար թափառելուց  
Ազունիկի շորերը գգգուել, մաշուել էին: Զէն  
Թագաւորազը աղջկայ վերջին պատասխանի վրայ  
մեղմացած ետ դարձաւ ջրաղաց, երկար վերար-  
րաւն հաճեց, ջրաղացպանին տալով առաց.

— Գնա շուտով բոստան. այնտեղ մի կին-  
արմատ կայ, այս վերարիւն տուր իրան հագ-  
նի, առաջնորդիր այստեղ:

Անց ասաց, այնպէս էլ կատարուեց: Մի քանի  
ըսպէից յետոյ թագաւորազը իւր առջև տեսաւ  
մի սիրուն, աննման աղջիկ կանգնած: Կտրուած  
թէերը որ տեսաւ, ջանը դող ընկաւ: Ճէնք ու  
շնորքին նայելուց յետոյ կաւները տեսնելով սրտի  
քէթը մղկտաց.

— Քոյրիկ, հարցրեց թագաւորազը, դու նվ,  
այստեղ նվ: Գիշեր ժամանակ ինչ ունիս բոս-  
տանում. ինչպէս ես ընկել այս կողմերը:

— Ես մի անտէր, անտիրական աղջիկ եմ:

— Բայց դու ծնող ունեցած կըլինիս. նվ ես:  
Ինչու են քեզ անբաղացրել, կարելի է ասես:  
Քիչ լոելուց յետոյ Ազունիկը պատաս-  
խանեց.

— Երբոր հետաքրքրում ես իմ վիճակով,  
կ'ասեմ, միայն ինդրում եմ ոչով մեզ չլի:

Թագաւորազը ջրաղացպանին դուրս ուղար-

կեց: Ազունիկը նատեց իւր գլխի անցուանքը <sup>1)</sup>  
միառմի պատմեց: Թագաւորազը գգացուել էր:  
Գեղեցկութիւնը գիտելուց յետոյ երբ լսեց որ  
կոնատուած աղջիկը Ճէն Թագաւորի զաւակն է,  
դարձաւ դէպի նա և խորը հառաչելով ասաց.

— Առաքինի աղջիկ, դու չես եկել այս-  
տեղ, այլ Աստուած է որ առաջնորդել բերել է  
իմ կալուածը: Անցածի վրայ մի՛ մտածիլ. դու  
իմ բազդն ես, որ Աստուած հանդիպեցրել է ինձ:  
Եգուցուանից դու կըլինիս Ճէն Թագաւորի հարսը:

Ազունիկը շնորհակալութեան տեղ ոտք  
համբուրեց: Թագաւորազը այդ գիշեր ջրաղա-  
ցում մնաց, յետոյ առաւօտը նրան իւր հետ վեր-  
ցրած գնաց հօր պալատը և այսպէս խօսեց.

— Հայր իմ, այս գիշեր մեր բոստանի մէջ  
գտել եմ այս աղջկան. հաւանել եմ, պէտք է  
ուզեմ, ինչ ես ասում:

իլ հօրը չասեց, թէ ով է, կամ ում աղջիկն է:  
Ճէն Թագաւորը աղջկայ կոներին նայելով  
բարկացած խօսեց.

— Խելքդ հացի հետ ես կերել ինչ է,  
աշխարհիս աղջիկները քեզ համար կտրուել են,  
որ այդ կոնատն ես ուզում: Ո՞վ գիտէ ում  
տնից է խռկած և ինչ վատ գործի համար են

1) Եղելութիւն, դէպի:

ձեռները կտրել: ձամբու դիր գնայ, գլխներից հեռանայ:

— Ո՞չ, հայր իմ, ընդդիմացաւ որդին. խօսք եմ տուել, պէտք է պսակուեմ: Աստըծու կամքին չեմ հակառակիլ, սա Նրա ուղարկած բաղդն է:

Հայրը շատ բան ասաց, որդին չլսեց: Հէնց մի ձայնի ասում էր՝ իմ ասածս պէտք է լինի: Հայրը վաղուց իմանալով իւր որդու ներհակ բընաւորութիւնը, անօգուտ համարեց վիճելը.

— Թո՞ղ քու ասածը լինի, որդի, բայց եթէ վերջը փոշմանես, այն ժամանակ ես գործ չունիմ:

— Հա, դու գործ մի՛ ունենալ, թող ես փոշմանեմ, ասաց որդին ու ուրախ գուրս եկաւ:

Հարսանիքի պատրաստութիւնը տեսնուած էր և անթիւ բազմութիւն ժողովուած: Հօր և բարեկամների ներկայութեամբ թագաւորազը դարձաւ աղջկան ասաց.

— Գու տեսնում ես, որ հօրս կամքի հակառակ քեզ կին եմ ուզում: Ասա տեսնեմ, ինչով պէտք է պարզերես անես ինձ աշխարհիս միջին:

Աղունիկը նեղ տեղն էր, չգիտէր բազմութեան առաջ ինչ ասի, որ սուտ չդուրս գայ: Եկի յուսը գցեց Աստըծուն ու կարմրելով խօսեց.

— Ես ոչ փողով կարող եմ պարձենալ, ոչ բաժինքով: Եթէ ուրիշները չասեն, ինքս գիտեմ

որ մսի գնդի պէս բան եմ առանց ձեռների: Բայց դու որ այս բոլորը իմանալով դարձեալ ինձ փառքի ու բաղդասրութեան ես արժանացնում, ես էլ Աստըծու յուսով տարու վերջը քեզ երկու ոսկեքոչոր<sup>1)</sup> տղայ կըտամ:

— Դրանից էլ թանկ ընծայ ո՞րը կըլինի. տայ Աստուած խոստումդ կատարուի, խնդումով պատասխանեց թագաւորազը. երկնքից մինչեւ գետինք շնորհակալ կըլինիմ քեզանից:

Հարսանիքն եօթն օր, եօթը գիշեր քաշեց: Աղունիկին տեսնողներն ամենն էլ ափսոսում էին և ասում. «ախ, երանի կոները ողջ լինէին»:

## Զ

Հարսանիքի օրից գեռ ուժ ամիս էր անցկացել, մի բան պատահեց:

Զէն Թագաւորը քաջասիրտ մարդ էր. ծերութեան միջոցին էլ զարհուր էր ազդում հարկւան թագաւորներին: Նա իւր սեպհական աշխարհից զատ ուրիշն էլ ունէր, որ պապից էր մնացել. մէկից հարստութիւն էր ստանում, միւսից քաջ մարդիկ:

<sup>1)</sup> Ոսկեմազլիկ:

Յանկարծ լուր բերին որ պապական աշխարհը ոտնակոխ են անում: Զէն Թագաւորը կրակ կտրած պատրաստութեան ետնից կացաւ, որ գնայ յարձակուղներին լաւ խրատէ. կտրուկ որդին առաջը կտրեց.

—Ինձպէս ջահէլին ամօթ չէ, որ ծեր հօրը պատերազմ ուղարկէ: Դու հանգիստ տանը կաց, ես կրգնամ և գիտեմ թէ ինչ օր կըմթնացնեմ զլինսերին: Միայն քոնն այն լինի, որ Աղունիկին նայես, պահպանեն: Նրա աղատուելու օրերը մօտ են. երբոր Աստուծով ոսկեքոչոր տըղաները կըճնուին, խնդրում եմ գրով ինձ իմաց տաս, որ միամիտ լինիմ:

—Լաւ, ասաց Զէն Թագաւորը, միամիտ գնա:

Որդին մնաս բարե ասաց Աղունիկին, քաջ զօրականների զլուխն անցած գնաց դէպի իւր պապական աշխարհը:

Փիչ միջոցից յետոյ Աղունիկն աղատուեց և խոստացած ոսկեքոչոր տղաները բերեց: Թագաւորը խնդաց, աղքատներին պարզեներ բաժանեց, յետոյ նստեց թուղթ գլեց, որ մարդու ձեռով որդուն իմաց անի թէ՝ աչքդ լոյս, որդի, կնիկդ ոնց ասել էր, այնպէս էլ կատարուեց:

Աղունիկին շնորհակալութիւն արեց կերսարը. սրտի ուրախութիւնից ինքն էր ծառա-

լում նրան, իսկ նորածին թոռներին գուրգուրելուց, համբուրթլուց չէր գաղարում:

Թղթատարը ճամբայ ընկաւ դէպի պապական աշխարհ. երկար ճամբով գնար, ուշ կըհասնէր թաղաւորապին. նա ընտրեց կարճ ու դժուար ճամբէն, որ անցնում էր զէն Թագաւորի հողով: Երբ պալատի մօտ հասաւ, թագաւորի ծառան եկաւ թղթատարին ասաց.

—Օտար եղբայր, մեր թագուհին քեզ կանցում է:

Թղթատարը առանց հակառակելու գնաց. էլ չիմացաւ, որ իրան կտնչողը Աղունիկին կըռնատող հարսն է, որին Աստուծ պատժել էր արդէն:

Զաւակին մորթելուց յետոյ նրան որդի չէր ծնուում, ինչքան էլ սրտով փափագում էր: Տեսնելով որ Աստըծու մօտ ուերես է, իւր խնդիրքը չի գուրս գնում, ճարը գցել էր գեղի. բժիշկ մարդիկ ու գիտկան կնանիք դեղ տալուց յոգնել էին. չէր լինում, չէր լինում:

Վերջը ամուսնուն խնդրում էր, որ ուրիշ աշխարհից գեղապետ<sup>1)</sup> բերել տայ. բայց նա էլ իւր կնկայ արարմունքներից զգուել կշատցել էր. միշտ այն էր մտածում, թէ ինչո՞ւ քրոջն այն-

<sup>1)</sup> Ամար ու հնար:

պէս անգութ կերպով պատժեց:

Այենից ատուած հարսը սովորութիւն էր արել լուսամուտի առաջ նստել և անցնող-դարձողին նայել: Հէնց աչքով օտար մարդ էր ընկնում, իսկոյն կանչել էր տալիս իւր մօտ և հարցու-փորձ անում. արդեօք դեղ ու ճար չգիտեն ծնն-դարերութեան համար: Այդ օրը օտար մարդ չէր նկատել. պարապ նստելուց յոդնել, հէնց ուզում էր լուսամուտի առաջից հեռանալ, թըդ-թատարն աչքովն ընկաւ: Հարսը իւր մէջ ասաց.

—Այս մարդը կարելի է բժիշկ լինի. եթէ բժիշկ չլինի, բժշկի տեղ կ'իմանալ, կանչեմ հարցնեմ:

Թառան եկաւ յալտնեց, որ օտարականը դուրսն սպասում է: Հրաման տուեց, որ իւր մօտ հրաւիրեն:

Թղթատարը ներս եկաւ, խոր գլուխ տուեց: Թագուհին իւր դէմուղէմը նստացրեց ու խօսք բաց արեց.

—Ուուրածկան եղբայր, ամօթ չլինի հար-ցնելը. ինչ մարդ ես, ուր ես դնում:

—Թագուհին քննի լինի, ես Զէն Թագա-ւորի մարդն եմ, շատ հարկաւոր գործի համար շտապով նամակ եմ տանում Զէն Թագաւորա-զին. նա հիմի իւր պապական աշխարհումն է:

—Կարելի է պատճառն իմանալ շտապով

թուղթ տանելուդ: Ես մտադիր եմ քեզ մի քանի օր հիւր պահեմ. շատ հարկաւոր բանի համար հարցումներ ունիմ:

—Եթէ հետաքրքիր ես, ուրախութեամբ կ'ասեմ թէ ինչի եմ շտապում: Կարելի է լսած էլ լինիս, թէ Զէն Թագաւորազը ո՞նց էր մի կունատ աղջիկ գտել զիշեր ժամանակ բոստանի մէջ: Առանց իմանալու թէ ով է, ում աղջիկն է, մեր թագաւորազը նրա սիրունութեանը հա-ւանելով եկաւ հօրն ասաց.

—Հայր իմ, թող սրա հետ պսակուեմ:

Հայրը շատ ընդդիմացաւ, բայց չկարողացաւ որդուն իւր մտադրութիւնից յետ կացնել: Վերջը յօժարուեց. տղէն էլ պսակուելիս աղջկանն ասաց.

—Քեզ նման արատաւորին կին եմ ուզում, ինչով պէտք է ինձ պարզերես անես աշխարհի մէջ: Աղջիկն ասաց.

—Ես էլ քու լաւութեան փոխարէն երկու ոսկեքոչոր տղայ կըտամ տարու գլխին:

Տարին բոլորուել է. աղջիկը իւր խօսքի հա-մաձայն որդիքը բերել է: Ուրախացած հայրը որդուն աչքալուս է ուղարկում, որ միամիտ լի-նի: Պատուիրել են առանց մի տեղ ոտը լինե-լու ճամբայ կտրեմ: Ինձ մի ուշացնիլ. թող քանի լոյս է, գնամ օթևան գտնեմ, ողորմած թագուհի, որ էգուց որցակականչին ճամբայ ընկնեմ դէպի թագաւորազ:

—Այս օտարական եղբայր, խորամանկ ժպիտով վրայ բերեց հարսը, այնպիսի ուրախալի համբաւ ասացիր, որ մէկի փոխարէն հարիւր հիւր կըպահէմ Զէն Թագաւորի պատուի համար: Թագաւորի թղթատարին ինչ ուզ կըդայ, գնայ դոմում իջևանի: Աւելի լաւ չի պալատում հանգըստանաս, ուր ամեն ինչ պատրաստ է: Վաղն ինչ ժամանակ կ'ուղես, ճամբար ընկիր, Աստուած քեզ հետ:

—Կեանքդ երկար լինի, ողորմած թագուհի, որ հրամայում ես, կըմնամ: Բայց իմ պարտքը լինի այս քաղցր հիւրասիրութեան մասին Զէն Թագաւորին յայտնելը:

—Ես ինչ հիւրասիրութիւն է, որ թագաւորին կամ նրա որդուն ասելն աժենայ: Հեռաւոր ճամբորդին օթեան ու կերակուր տալը ամեն մէկի պարտքն է:

—Էլ, ճառաներ, գոչեց հարսը, շուտով այս պատուական հիւրին տարէք կողքի սենեակը, ինչպէս հարկն է, իրիկնահաց տուէք, կողէնքների ամենալաւը փռեցէք:

Իսկոյն հրամանը կատարուեց:

Հասաւ զիշերը: Պալատում ամենքն էլ հանգիստ քնած են, միայն մի հոգի է զարթուն. դա չար հարսն էր. զգուշ կատուի պէս ոտի բթերի վրայ գնում էր թղթատարի սե-

նեակի դռանը ականջ դնում, յետ գալիս: Թըղթատարը ոտով երկար ճամբար գալուց ջարդուել՝ խոր քուն էր մտել: Հարսը վերջի անգամ լսելով որ փշոցի ձախն է գալիս, իմացաւ որ քաղցր քնի մէջ է. սիրտ արաւ դուռը բաց տրեց ու սենեակի մէջ նրա հազուստը քըքրելով գրպանից նամակը հանեց ու շտապով դարձաւ իւր սենեակը.

Նամակի ծալը յետ տուեց, ճրագի տակ կարդաց ու մաղձում երեսով խօսեց.

—Ես զիտում էի, թէ դաշտերում դալիերի ու ագռաւների կեր ես դառել, իմ աչքի փուշ. միթէ գեռ կենդանի ես և այն էլ Զէն թագաւորի տանը: Սոլասի՞ր, մինչեւ քու արելը իմ ձեռով չխաւարի, դու ինձ հանգիստ չես տալ:

Նստեց ուրիշ թղթի վրայ այս խօսքերը զրեց.

«Անբաղդ որդեակ.

Ամօթ ու խայտառակութիւն եղաւ իմ անունիս: Կռնատ կինդ ազատուեց և երկու լակոտ բերեց: Ի՞նչ անեմ, շուտով մի բան ասա: Պահէմ թէ զետնաթաղ անեմ:

Փու վշտալի հայր Զէն Թագաւոր:

Առաջուայ նամակի պէս ծալեց ու զգութիւնով տարաւ շորի գրպանը դրեց:

Առաւօտը գեռ չլուսացած միամիտ թղթա-

տարը զարթեց ու իրան արեւի սրտով ճամբէն շարունակեց:

Ճատ դնաց, թէ քիչ, հասաւ թագաւորապին. բարեւեց, ուրախ-ուրախ նամակը նրան մեկնեց. սպասում էր որ իսկոյն կ'ուրախանայ և թանկագին պարզեւ կըտայ. բայց զարմացաւ, թէ ինչի տէրը նամակը կարգալիս ուրախանալու փոխանակ տիսրեց չափաղանց:

Թղթատարը մնաց անկմանկ եղած<sup>1)</sup>, մըտամոլոր: Վախենում էր թէ պատճառը հարցնի թագաւորազից. սպասում էր առաջ նա խօսի: Բայց թագաւորազը սրտակոտոր և անձայն քաշուեց իւր սենեակը. քիչ լաց եղաւ ու յետոյ թղթին պատասխան դրեց: Թղթատարին առատորէն վարձատրեց ու պատուիրեց որ շուտ հօրը հասցնի նամակը:

— Ճատ բարի կրինի, ասաց թղթատարն ու նամակը զրպանը գնելով վերադարձաւ դէպի Զէն թագաւորը: Իւր մտքում խօսում էր. «կարճ ճամբով գնամ թէ երկար, կարճ ճամբով գնամ թէ երկար»: Երկար կրկնելուց յետոյ վճռեց.

— Ե՛հ, կարճով գնամ: Ի՞նչ անեմ որ քիչ քարքարուտ է. բաս որ թագուհու մօտ կ'իջնեմ, քաղցր զրոյց կ'անեմ, այդ ոչինչ:

Ասաց ու արեց թղթատարը. եկած ճամբով դարձաւ և ուղղակի չար հարսի տանն իշաւ, որ զիշերը մնալ, էզսը դնալ:

Նենգաւոր հարսը անհամբեր նրան սպասում էր. քաղցր ընդունեց, հարցրեց իւր ողջութիւնից, թագաւորի ողջութիւնից. յետոյ իրիկունը իւր ձեռով լաւ ուտացնելով, խմացնելով քնացրեց:

Գիշերուայ կիսին միայն հարսն էր ոտի վրայ. սա զգոյշ մտաւ թղթատարի սենեակը, նամակը զրպանից հանեց, վաւզ իւր սենեակը գնաց. կարդաց ու բարկութիւնից պատռելով, նրա տեղ նորը զրեց այս խօսքերով.

«Հայր իմ.

Սինքան բարկացած եմ որ չեմ կարող գրով լայտնել, միայն այսքանը կ'ասեմ. նամակս իրիկունը հասնի, իրիկունը սպանի մօրն ու իւր որդկերանց, առաւօտը հասնի, առաւօտը: Միայն թէ որ գամ գրանց երեսը չտեսնեմ:

Քու քամբաղդ որդի:

Տարաւ զգոյշ կերպով դրեց թղթատարի զրպանը և ինքը քաշուեց քնելու:

Թղթատարը վաղ-վաղ զարթեց և իւր աշխարհի ճամբէն բռնեց. հասաւ թագաւորի մօտ, նամակը տուեց:

Զէն թագաւորը ու բախ բաց արեց. բայց

<sup>1)</sup> Ջուարուած:

աչքը զրածին առնելուն պէս մահուան դողեկաւ վրէն. երեսը սփրթնեց, աչքերը կայծակին տուեց, ձեռով մազերից բռնեց ու ծկլթաց.

—Աս ի՞նչ է զրած, Աստուած իմ: Միթէ աչքերս լաւ չեն տեսնում:

Աչքերը տրորելով մէկի տեղ երեք անգամ կարդաց. դարձեալ միւնոցն էր: Զիմացաւ ի՞նչպէս բացատրէ որդու զրածի միտքը. մնաց շուարած կանգնած:

—Ի՞նչպէս հարսիս մօտ զնամ: Գնամ էլ ի՞նչ ասեմ. որդուս զրածը նրան ի՞նչպէս յետ պատմեմ:

Ամենքին զարհուրեցնող թագաւորը մտքի ծովում մոլորեւել էր, խեղճացել: Հէնց որ միտն էր զալիս թէ որդու զրածը կատարելով պէտք է պարկեշտ հարսիցն ու սիրուն թոռներից միանգամից զրկուի, մազերը մարմնի վրալ փշաքաղւում էր: Կսկծից քիչ էր մնում ծերունին իսելքը կորցնի, ճարահատած լաց էր լինում ու նրանով սիրտը վէր նստացնում:

Աղունիկը լսել էր որ թղթատարը եկել է. զարմանում էր թէ ինչու կերսարը չի զալիս յայտնում մարդու ուղարկած շնորհաւորէքը: Ապասաւորների միջոցով իմաց էր անում, թէ արի ստացած թղթի բովանդակութիւնն ասա, կերսարը չէր գալիս:

Վերջը երբ հարսը մի քանի անգամ դիմելով կերսարի հոգին ջուր դրեց, նա հարսի երեսը դուրս եկաւ գլուխը քաշ արած ու մորմոքուած սրտով խօսեց.

—Այ իմ աչքի լոյս, հայ-հարա ստիպում ես թէ թղթի միջինն ասա, իսկի ասուելու բան է, ա քեզ մատաղ գնամ: Ախր խղճից դորս բան է ապսպիկ որդիս, ես ո՞նց բերան բերեմ: Թուղթը հորէս, առ, ի՞նքդ կարդա, հասկացիր: Թագաւորը նամակը տուեց, ինքը դուրս գնաց:

Աղունիկը շտապով նամակը բաց անել տուեց, կարդացու մնաց լուսած: Նայեց ստորագրութեանը. նորից կարդաց ու չիմացաւ թէ ինչու պէտք է այգալիսի հրաման ուղարկէր իւր մարդը: Խոր մտածմունքի մէջ ընկած նա այնքան իւր վրայ չէր ցաւում, ինչքան անմեղ երեխաների, որոնք զուր պէտք է կորչէին: Բայց նա իւր մարդուն չափազանց սիրում էր, չէր ուզում նրա հրամանը անկատար թողնել: Զէն Թագաւորին կանչել տուեց ու ասաց.

—Աս նամակ գրողը քու փոքրաւորն է, բայց իմ գլխի տէրը: Ուխտո այնպէս է, որ նրան հնազանդեմ ինչպէս իմ մեծաւորի: Աղաչում եմ, նրա հրամանը կատարիր միամի: Աստուած իմաստուն է, նա փորձանքներով մեղաւորներին

զգուշացնում է և պատիմներով խրատում։ Եթէ  
Աստղու մատը խառը չի լինիլ այս բանում, թող  
որդիկ իւր անդժութեան համար պարտական  
մնայ թէ ինձ և թէ այս անմեղ մանուկներին  
խնդրում եմ, էլ մի ուշացնիլ, կատարէր հրա-  
մանը շուտով։

—Քաւ լիցի, պատասխանեց թագաւորը, ա-  
ւելի շուտ կուզեմ, որ երկինքը գլխիս փուլ գայ  
և ինձ տակովն անի, քան թէ յօժարուիմ ձեռներս  
անմեղ արիւնի մէջ թաժախել։ Ի՞նչ անեմ, որ  
սիրելի որդիս է գրողը, չեմ կարող նրա անի-  
րաւ վճիռը հլութեամբ լսել ու կատարել։ Եր-  
կար մտածելուց զլուխս էլ իմը չի. բայց նրա  
արարմունքից ոչինչ չեմ հասկանում։ Ես վճռել  
եմ այնպիսի բան անել, որ ոչ նրա խօսքը գե-  
տին ընկնի և ոչ դու ու մանուկներդ կեանքից  
զրկուիք։ Թէպէտ իմ ընտրած միջոցն էլ պա-  
կաս ցաւ չի պատճառելու, բայց խելօքութիւն  
է վնասի փոքրն ընդունել, քան մեծը։ Վեր կաց,  
իմ պարկեշտ Աղունիկ, վերցրն մանուկներդ,  
Աստուած կանչի ու գնա՞ ուր ուզում ես։ Մար-  
դուդ առաջ պատասխանատուն ես եմ։ Թող ինչ  
ցաւ ուզում է զլիխս գայ, միայն ձեզպէս ան-  
մեղների մահը աչքովս չտեսնեմ։



Հետևեալ առաւօտ Զէն Թաղաւորի թոռ-  
ներին համբուլեց, հեկեկալով տեղաւորեց նրանց  
խորջինի մի աչքում, միւս աչքն էլ պաշարով  
լցրեց և Աղունիկի ուսով զցեց։

Խոնարհ հարսը համբուլեց կերսարի աջը  
և տիսուր-տրտում քաղաքեց ոտը դուրս դրեց  
ալն ժամանակի, երբ բոլոր քաղաքացիք հան-  
գիստ քնած էին։ Ճալակի բեռը քաղցը էր ու  
թեթև, բայց մտածմունքները դառն էին ու  
մթին։ Աղունիկը ամայի դաշտում կանգ առաւ  
և խոսեց։

—Զար բաղդ, Էլի նախանձեցիր վիճակիս  
վրայ, Էլի ինձ անտէր շինեցիր. մին-  
չև Երբ հալածես, անիրաւ։ Նպատակդ ի՞նչ է.  
Հողին հաւասարել ինձ Զէն Թաղաւորի անմեղ  
զաւակին։ Զէ, փափազդ չի կատարուիլ։ Երբ հօրս  
տնից խոկել տուիր, ալն ժամանակ էլլի կարող էիր  
լոյս ունենալ որ նեղութիւններով ինձ կըմաշես,  
սրտամեռ կ'անես. ալն ժամանակ ես միայնակ  
էի, անփորձ էի. բայց հիմի որ մալր եմ և եր-  
կընքի կամքով երկու անպաշտպան մանուկների  
պահապան կարգուած, խելքդ ի՞նչ է կտրում,  
եթէ աշխարհիս զրկանքները, տառապանքները

ժողովես, միանգամից դլիսիս թափես, իսկի ես կըխոնարհուեմ, իսկի մազաշափի կըփշտուեմ։ Զէ, չար բաղդ, ես պէտք է ապրեմ անմեղ մանուկներիս համար։

Այս ասելուց յետու Աղունիկը խելքի կտրած ճամբէն բռնեց ու գնաց։

Պատահեց սար, անցաւ. պատահեց մուժ ձոր, անցաւ. փորձանքների հանդիպեց, առանց երես թեքելու անցաւ. մի խօսքով խուրջինն ուսին թափառեց խոր ձորերում, մուժ անոտառներում անահ, անվախ։ Ճարունակ կանչում էր. «Աստուած, Դու չկորցնես անմեղ մանուկներիս» և այսպէս ասելով գնում էր։

Բայց չար բաղդը ձեռը չէր վերցնում նըրանից, ամեն տեղ մոլորեցնում էր։ Աղունիկի պաշարը վաղուց հատել էր. երկար ժամանակ նա անտառների պտուղներով էր կերակրում։

Բոլոր ժամանակ Աղունիկի սրտի մխիթարանքը մանուկներն էին. նրանք խուրջինի միմի աչքում կանգնած ժպտում էին մօր երեսին և անտառի, թէ ձորի մթին տեղերում անմեղ հարցեր տալիս, Աղունիկին մտքի ծովից, երկիւղի ձեռից ազտում։ Արդէն սկսել էին թոթովիլ, կլպլտալ մանուկները։

Մի անգամ Աղունիկը մանուկների հետ զըրուցով էր ընկել, չէր իմացել որ անտառի մէջ

մոլորուել է։ Յանկարծ գնաց, գնաց և մի գետի հանդիպեց։ Գէսուղէն շատ նայեց, կամուրջ չկար, անցնէր, ագամորդի չկար, օգնէր։ Յետ դառնալ անկարելի էր, վախենում էր անտառի թարձր տեղը մոլորուած մնայ։

Ի՞նչ անէր, անտառը խշում էր, գետը վշշում։ Վճռեց Ստրծու անունը տալ և անցկենալ։ Սիրտ արաւ, մտաւ ջուրը։ Գետը մեծ չէր, բայց զժժոն<sup>1)</sup> էր. յատակը մեծ-մեծ քարերով լիքը։ Մէջտեղը չհասած, ոտը սլկըհաց, խուրջինն ուսից թեքուեց ջուրը. կռները մեկնեց որ բռնի, ձեռները չօգնեցին։ Մինչև վեր կըկենար, գետը մանուկներին խուրջինով սկեց<sup>2)</sup> տարաւ։ Աղունիկի մէջքը, հէնց իմանաս, կոտրուեց, ջրի մէջ մնաց երեխանց ետնից լալիս։

Կոտրած սրտով գուրս եկաւ գետի ափը, ընկաւ երեսի վրայ, կսկծաց, մղկտաց ու հետն էլ սկսեց կռները քարերին, փայտերին խփել, թէ ինչու թող արին, որ ջուրը իւր երեխանց տանի։ Խեղճը չէր տեսնում որ արիւնոտուել են։ Աչքերն արտասուքի ծով էին դարձել։

Երկար ժամանակ այսպէս անմխիթար լալիս էր, երկու ծիտ թրթռալէ մօտեցան նրան, թեկները երեսին քսելով ուշքի բերին։ Նրանցից մէկն ասաց։

<sup>1)</sup> Արբնթաց. <sup>2)</sup> քշեց։

—Աղունիկ, լաց մի լինիլ, մի աչքալոյս  
եմ տալու:

—Ի՞նչ աչքալոյս, ծիտիկ ջան, աչքերը  
գդրզուած փէշով սրբելով խօսեց Աղունիկը:

—Բաւական էր, ինչքան ցաւեր քաշեցիր:  
Որդիրանցդ համար մի տիրիլ, նրանք կորած  
չեն:

—Հապա ի՞նչ են, որ կորած չեն, վրաբերեց  
Աղունիկը սրտակոտոր:

—Նրանք ողջ և անվնաս են: Քուրը տա-  
րել է և մի կոճղի մօտ ոտն արել:

Աղունիկն ուրախացաւ: Միւս ծիտն էլ ասաց.

—Աղունիկ, մենակ այդ չէ, ես էլ պէտք  
է աչքալոյս տամ: Տիսուր օրերիդ վերջն է, քիչ  
էլ համբերիր, ամեն ինչ կըստանաս: Էլ ան-  
տուն, անտէլ չես թափառիլ: Ոյս ճամբով գու-  
կը հասնես մի ջրվէժի. նրա կշտից մի կածան<sup>1)</sup>  
է ջոկում գէպի աջ. այդ կածանը կըբռնես ու  
կրգնաս: Վերջը կըպատահի մի շինութիւն, նրա  
մէջը կըբնակուես:

—Ինչով պէտք է ապրեմ, սիրուն ծիտիկ,  
ով ապրուած կըտայ. ոչ պատրաստի փող ունիմ  
և ոչ աշխատելու կռներ:

—Աղունիկ, դու միամիտ կաց, Աստուած

կըհասցնի. մինչև շէնքին հասնելն ապրուատի  
միջոց կըստանաս:

Այս ասելով ծտերը թուան: Աղունիկը ան-  
համբեր սրտով գետն ի վէր գնաց և ի՞նչ տե-  
սաւ: Խուրջինը մի կոճղի դէմ առած, ջուրը  
կողքով տալիս է և անվնաս անցնում: Մանուկ-  
ները հէնց որ իրանց մօրը տեսան. «մայրիկ,  
մայրիկ» կանչեցին և խուրջինի աչքերում ժաժ-  
ու մաժ<sup>1)</sup> եկան: Լացակունած Աղունիկը վա-  
զելով ջուրը մտաւ երեխանց հանեց, պաչպէց,  
ֆէրին փառք տուեց: Մի կերպ մզեց<sup>2)</sup> խուրջինը,  
երեխանց շորերը, քիչ ցամաքացրեց ու նորից  
շալակելով իւր ճամբէն շարունակեց:

Մանուկները բնութեան մէջ մեծանալով  
սկսել էին օր առաջ ոտնառտել: Ով գիւղում,  
քաղաքում տարով կըմեծանար, նրանք բաց եր-  
կնքի տակ օրով էին մեծանում: Այնքան ժրուել  
և փարթամացել էին, որ չէին ուզում խուրջին  
մտնել և մօրը ծանրութիւն տալ: Իրար հետ  
կոնաբռնուկ արած Աղունիկի առջևից գնում էին:

Ճատ գնացին թէ քիչ, Աստուած գիտէ,  
վերջապէս հասան ծիտիկների ասած ջրվէժին:  
Այստեղ հանգիստ առան: Սիրուն տեղ էր. որ  
կողմը նայում էր Աղունիկը, այնպէս գեղեցիկ

<sup>1)</sup> Կեղ շատիզ:

<sup>2)</sup> Քամեց:

էր, ոնց որ երկնային դրախտ: Ջրվէժը խօ այնքան դուրեկան էր, որ նրան նայելիս Աղունիկը բոլոր ցաւերը մոռանում էր:

Սարի լանջերից աղբիւրները իրար դրկած գլորուելով դալիս էին բարձրից ուժով ժայռի վրայ ընկնում. ջրի թափից ժայռի մէջ փոս էր դառել: Այդ փոսից ջուրը ծառի նման բարձրանում էր ու արևի տակ կանաչ-կարմիր ներկուելով՝ մօճուռմ թափուռմ էր ներքեւ աստուածաշէն քարէ աւաղանի մէջ:

Երկար ճամբար գալուց, ծառերի ու քարերի միջով թափառելուց կեղտոտուել ու մաշուել էին Աղունիկի և մանուկների շորերը: Ամօթ էր քաշում այդ անկարգ հագուստով մարդամէջ մտնելը: Ուզեց թէ իրան և թէ որդկերանց շորերը լուանալ, յետոյ ինչքան հնար է կարկատել պատուած տեղերը:

Եղանակը հիանալի էր. մօր պատուէրով երեխաները շորերը հանեցին և գնացին լիազալու: Աղունիկը՝ կակղելու համար շորերն ածել էր աւազանի փրփրուն ջրի մէջ: Փիչ միջոցից յետոյ կուները մեկնեց որ շորերը հաղաղի, լուանայ, չկարողացաւ, մատներ չունէր:

Արտասուքն աչքերը կոխած դարձաւ դէպի երկինք և այսպէս աղաչանք արաւ.

— Ողորմած Աստուած, Դու լաւ գիտես իմ

արդար ու մեղաւոր լինելը. չեմ հ ճարձակւում տրտնջալու իմ գլխին եկած պատիժների համար. պատրաստ եմ աւելի շատին համբերելու: Բայց արարիչ Աստուած, ինչ կըլինի մեղաւորիս համար անմեղների չպատժես: Աղաչում եմ, բաւական համարիր այս մանուկների քաշած զըրկանքները, մեղք են, ողորմած սրանց: Երկար ժամանակ է, սրանց ոչ շորերն է լուացուել, ոչ զլուխները մաքրուել: Գլուխ որ անարժան եմ Քու մեծ ողորմութեանը. բայց քիչն էլ է մի խընալի ինձ այս անմեղ մանուկների համար: Տէր իմ և Արարիչ, աչքս չեն դալիս ոչ հայրական գանձերը, ոչ ամուսնական փառքը, միայն կըռներս ողջացրու, կուներս...

Այս ջերմ աղաչանքն էր անում Աղունիկը Աստղծուն, աչքերը ներքեւ զցեց և ինչ տեսաւ. կոները ողջացած, կտրած ձեռները իրանց տեղն եկած: Վրայ ընկաւ պաչպչեց ողջացած ձեռները, հաղար բերան փառք տուեց Աստղծուն: Ուրախ-ուրախ մօտեցաւ աւագանին, լուացաւ իւր և մանուկների շորերը, արևի տակ փուելուց յետոյ քաշուեց մի շուաք, ծառի տերեւակալած ճիւղերից պառկելու փափուկ տեղ շինեց, որ քիչ հանգստանայ ու տխուր մտածմունքները իրանից հեռացնի: Անցկացած բաները լինելու վրայ էր, որ քունը նրան իւր ծոյն առաւ:

Մանուկները խաղալու ժամանակ պսպղանքաներներ էին գտել, ուրախացած վաղերով եկանմօր կուշտը.

—Մայրիկ, մայրիկ, զի՞զի<sup>1)</sup> ենք գտել. տես ինչ լաւ է:

Նրանց ճշճվոցից Աղունիկը Ժարժաժեղաւ, քունը փախցնելով մանուկներին ծնկների վրայ նստացրեց. գտած բաները տնդղելով տեսաւ որ փայլուն ոսկիներ են: Ուրախացած երխաների ետևից դնաց. ինչ տեսաւ. գետնում թաղած մի պղինձ՝ ոսկով լի:

Աղունիկը նորից փառք տուեց Տէրին. խուրչինը բերեց բոլոր ոսկիքը ածեց մէջը: Նստեց լուացած շորերը մի կերպ կարկատեց. մանուկների գլուխները լուացաւ ջրլիմի պարզ ջրում ու ծտերի ցոյց տուած կածանով դնաց:

Երեխաները խաղալով, խնդալով գնում էին մօր առջելից, Աղունիկը նրանց համար ծառի ճիւղերից նետ և աղեղ էր շինել:

Ֆնալով հասան մի տան: Տան առաջը պարտէզ, պարտէզի մէջ սօսի ծառ ոսկեզօծ տերեներով. մօտը մի մեծ աւազան, ուր աղբիւրի ջուրը թափւում էր քլքլալէ երկու ունկներով: Տան մէջ ամեն բան պատրաստ. բայց մէջը բը-

նակռւող չկար: Աւագանի չորսուբոլոր նստարաններ կալին. ճամբից յոգնածները գալիս էին նստում, աւազանի ջրով փոշուց մաքրում, առառ թանձր շուաքում էլ հովանում:

—Աղունիկը հէնց որ տունը տեսաւ, ասաց.

—Այս լաւ յարմար տեղ է. ոնց երեսում է, անթիւ մարդիկ են անցուգարձ անում այս տան կշտով: Վշու ոսկեզօծ տերեները շատ ճամբորդների աղահութիւնը աշկարայ կ'անի:

Ճատ կարելի է, վաղ թէ ուշ այսոեղով անցյկենան եղբայրս, ամուսինս: Կընսուեմ այստեղ և կրապասեմ: Կռներս առողջացնող ամենաբարի Աստուածը ծտերին առանց նպատակի չէր ուղարկել ինձ մօտ: Նրանք ասացին որ տըխուր օրերիս վերջն է. Նրանք ասացին որ ապրուստ եմ գտնելու, նոյնպիս նրանք ցոյց տուին այս կածանը: Եւ բոլորը ճիշտ կատարուեց: Սրանից յետոյ յոյսս Աստրծու վրայ կըդնեմ, Նա իւր պահած գառը գայլին չի տալ:

Մտաւ պարտէզ, այնտեղից էլ բարձրացաւ տունը, տեղաւորուեց իւր մանուկների հետ: Ապրուստի համար փողն առատ էր. աւազանի մօտ շատ ճամբորդներ էին հանգստանում, նըրանցից էլ ծառայ, աղախին վարձեց ու իրան համար ապահով բնակուեց անվախ, աներկիւդ:

<sup>1)</sup> Փայլուն իր:

Աղունիկին այստեղ թողնենք, որ իւր որդու կերանցով մխիթարուի, մենք գնանք Զէն Թագաւորազի հալը հարցնենք:

## Է

Զէն Թագաւորազը թղթատարի ձեռով նամակն ուղարկելուց յետոյ երկար չքաշեց տխուր մտածմունքներով ամօթահար վերկացաւ, եկաւ հայրական աշխարհը: Առաջ պայատում դէսուդէն աչք ածեց, որ կնկանը տեսնի և ասի. «ախր ինչո՞ւ ինձ ամօթով թողիր աշխարհիս մէջ»: Կնիկը չերկաց: Թագաւորազը գլուխը քաշ արած և աւելի սրտակոտոր եղած դարձաւ հօրը հարցըեց.

— Հայր իմ, ուր է կինս, ուր են նրա ծընունդները:

Հայրը թէ՝

— Ի՞նչ ես անում, որդի:

— Ո՞նց թէ ինչ եմ անում, հապա կնկանս համար չհարցնեմ թէ ուր է:

— Ախր ինչո՞ւ ես հարցնում, ինչն է ստիպում քեզ:

— Ո՞նց թէ ինչո՞ւ եմ հարցնում, զարմացած ու վշտացած խօսեց Զէն Թագաւորազը:

— Ի հարկէ հարկաւոր չէ հարցնելը, քանի որ զրել էիր թէ՝ նամակս իրիկունը կրհասնի, իրիկունը սպանի մօրն ու ծնունդներին, առաւոտը հասնի, առաւոտը: Ես էլ զրածդ ակամայ կատարեցի:

— Ի՞նչ ես պատմում, հայր իմ, լացախառն ճշաց Զէն Թագաւորազը. Ես երբ եմ զրել թէ կնկանս սպանիր: Դու զրել էիր ինձ, որ կինս ազատուեց, այս ու այս բերեց: Հարցնում էիր ինձ ինչ անեմ: Ես էլ պատասխանեցի որ Սսործու տուածի դէմ դժգոհողը չեմ. ինչ եղել է, իրան կամքն է, պահիր անվնաս մինչև տուն հասնելս:

— Ո՞վ է քեզ արդպէս բան գրել, որդի, զարհուրած խօսեց Զէն Թագաւորը: Ես լիմարուել էի, թէ ձին զլիիս քացի էր տուել, որ արդպէս բան գրէի: Ընդհակառակը՝ թղթով աչքալոյս էի ուղարկել քեզ, որ կնիկդ ազատուել է և երկու սսկեքոչոր տղայ է բերել: Յանկարծ պատասխան եմ ստանում, թէ կնկանս ու որդկերանցս մորթութիր: Ճատ էլ կամեցայ ուշագրութիւն չդարձնեմ զրածիդ, միայն կինդ, հաւատարիմ կինդ. թուղթը կարդալով առաջ տիրեց, յետոյ մի այնպիսի հնազանդութիւն ցոյց տուեց, որ ինձ զարմացրեց: Նա էր ինձ ստիպում որ շուտ կատարում տամ զրածիդ: Եւ այդ անում էր, որ ցոյց տայ, թէ որչափ է սիրում քեզ և

մինչև ի՞նչ տեղը կարող է խոնարհիլ քո պատճառով: — Այս, իմ աննման Աղունիկ, որքան պատկեշտ էիր, վշտահար կերպով կուրծքը ձեծեց Զէն Թագաւորը. քու նմանը ուր գտնեմ. ի՞նչու չար բաղդը խլեց ձեռից: Աստղի պէս լուսաւորում էիր խաւարած ձերիս, ինձ միթաքելու և վերջին օրերս քաղցրացնելու համար էր ուղարկել քեզ Աստուած. ի՞նչու շուտ յետ խլեց իւր ողորմութիւնը...

— Վերջն ի՞նչ արիր, հայր իմ, անհամբեր սրտով հարցրեց որդին:

— Ի՞նչ պէտք է անէի. զրածդ կատարելու համար իմ ձեռով իմ աչքը հանեցի:

— Ի՞նչ ես ասում, հայր իմ, լաց եղաւ որդին. հապա Աղունիկը արածիդ հակառակ չէ՞ր:

— Ընդհակառակը, իւր անձի մեծ թշնամին նա էր. քանի անդամ մանուկները գրկած բերել է առաջս, խնդրել, աղաչել որ գրածդ կատարեմ:

— Յետու ի՞նչ արիր, կատարեցիր...

— Սպասիր, որդի, ասեմ: Մի քանի օր բերանս առանց մանանայ լինելու մի գլուխ լաց էի լինում: Փախչում էի որ Աղունիկին չպատահէմ. վերջին օրերը ալլես արտասուք չէր երեւում նրա աչքերին. տեսնում էի որ մտքում վիճել է մեռնել: Ամեն անգամ վճիռդ մտաբե-

բելով երբ Աղունիկին ու մանուկներին տեսնում էի, սիրտս լքլքում էր, ձեռներս դողդողում...

— Վերջապէս ի՞նչ արիր, կարծ ասա. անողորմ գտնուեցիր, դասնացած հացը որդին:

— Այս, որդի, այնքան անողորմ գտնուեցիր, որ մեռցրի խիզնս քու պատճառով. թէպէտ զրածդ ճշութեամբ չկատարեցի, բայց ստիպեցի կնոջդ, որ մանուկներն առնի ու պալատից հեռանայ:

— Այս, հայր իմ, գոչեց Զէն Թագաւորագը և փաթաթուեց հօր վզովը, որքան շնորհակալ եմ, որ զութ ես ունեցել անմեղ մանուկներիս վրայ: Տուր ինձ ձեռդ համբուրեմ: Որհնիր ճամբէս, ես զնում եմ այնտեղ, ուր զնացել է Աղունիկը իւր մանուկներով: Եթէ կենդան գտան նրանց, կըբերեմ ու ես էլ կըդառնամ, եթէ չէ, մնամ բարով:

Թագաւորական շորերը թողած հօրսկանի շոր հագաւ, նետ ու աղեղը ճլորը<sup>1)</sup> գցեց, Աստրծու անունը տալով կորած Աղունիկի ետնից գնաց: Աչքը չէին գալիս ոչ շոգը, ոչ անձրել և ոչ ճամբի դժուարութիւնը: Պարկը ուսին հօրս անելով և ճամբայ կտրելով հասաւ մի վիրու-վիրու անտառ. տեսաւ ալնտեղ մի մարդ:

<sup>1)</sup> Վկա:

—Այ եղբայր, ովք ես, ինչ մարդ ես, հարց-  
րեց Զէն Թագաւորազը:

—Հորսկան եմ, պատասխանեց նա:

—Բա՛ ես էլ հորսկան եմ: Որի՞ նստիր կող-  
քիս, քեզ իմ սրտի ցաւը պատմեմ. թէ իմ վի-  
ճակը քու ոիրտը շարժի, ընկերացիր ինձ, գնանք  
միասին:

—Լաւ, պատմիր, անծանօթ եղբայր, տես-  
նենք ինչ է քու դարդը:

Զէն Թագաւորազը գտակը գետնին դրեց ու  
մանրամասը պատմեց իւր զլիսի անցուանքը:  
Միւս հորսկանը զլուխը քաշ լսում էր ու երբեմն  
կարմրատակում էր, երբեմն գոյնը թռցնում:

Այ Զէն Թագաւորազն էր:

Աղունիկին կրնատելուց յետոյ շատ չէր  
անցել, իւր արածի վրայ զղացել էր: Ճատ էր  
մեղադրել իրան, ետնից չէր հասել: Խղճի ձե-  
ռից տանջուելիս ոչ գիշերն է հանգիստ ունե-  
ցել, ոչ ցերեկը: Ճուտ-շուտ թագուհի մայրը ե-  
րևացել է երազում և նրա վրայ վշտացել: Կինը  
գաւակից կտրուել էր և գէշ-գէշ արարմունք-  
ներով անտանելի դարձել Զէն Թագաւորազին:  
Աւելի լաւ էր համարում ու օձ տեսնել, քան  
թէ իւր կնոջը: Նրանից բաժանուել էլ անկարելի  
էր. միակ միսիթարութիւնը դտնում էր որսոր-  
դութեան մէջ:

Կնկայ երեսը ուշ տեսնելու համար շա-  
բաթներով հորսը պատճառ արած անտառ ու  
ձոր չափչփում էր: Հիմի էլ կնկայ ձեռից էր  
փախել անտառ, որ անսպասելի կերպով պատա-  
հեց Զէն Թագաւորազին: Դմացաւ որ իւր կըռ-  
սատուած քոյրը ոչ թէ կենդան է մնացել, այլ  
և թագաւորի հարս է դառել, երկու որդի ու-  
նեցել. դրա վրայ շատ ուրախացաւ, որովհետեւ  
իւր արածի վրայ վաղուց փոշմանել էր: Բայց  
որ վերջը լսեց թէ նորից գիրազդութիւն է ե-  
կել քըոջ զլիսին, սրտում շատ ցաւեց ու առանց  
իւր ով լինելը լայտնելու դարձաւ Զէն Թագաւո-  
րազին ասաց.

—Թագաւորազ տէր, ցաւը մարդիկ պէտք  
է քաշեն, ոչ սարերը: Քաջ կաց: Դու թագա-  
ւորի ցեղ ես, քեզ աստիճանով հաւասարուել չեմ  
կարող. բայց երբեւ հորսկան ընկերդ կըլինիմ:  
Թագաւորազին միշտ մի ծառալ հարկաւոր է,  
ընդունիր ինձ ծառալի տեղ: Փու դարդը  
սիրոս տակն ու վրայ է արել. գնանք ուր որ  
կ'ուզես, թէկուզ մինչեւ աշխարհի տուաը:

—Ընորհակալ եմ, հորսկան եղբայր, որ  
ընկերանում ես. Հիմի կարծում եմ թէ ցաւ  
կիսուեց, որովհետեւ սիրոս թեթեացաւ:

Իրար ձեռ տուին ու ճամբայ ընկան:

Ճատ քաղաք, շատ գեղ անցկացան, ամեն  
տեղ էլ հարցրին.

—Այս կողմերը կռնատ կնիկ չէք տեսել,  
հետն էլ երկու մանուկ:

Ամեն տեղ էլ պատասխանում էին:  
—Չէ, չենք տեսել:

Վերջապէս անտառով անցնելիս մի փայտահատ տեսան, սրան էլ հարցրին: Սա ասաց.

—Գիտեմ որ հորսկանները փայտահատից շնորհակալ չեն աշխարհի այն զլիսից մինչև այսօր, որովհետև կացնի թխկոցից կիտարն ու բախրան զլուխ են առնում, կորչում: Բայց ոնց երկում է գուք ինձանից անգոհ չպէտք է գընաք: Այստեղից բաւական հեռու մի տան երկու ոսկեքոչոր երեխաներ են կենում իրանց մօր հետ: Այստեղ ոսկետերեւ սօսի կալ, մօտն էլ աւագան, բայց չզիտեմ կնիկը կռնատ է թէ կռնաւոր:

—Ճատ շնորհակալ ենք, փայտահատ եղբայր, որ այդքան տեղեկութիւն էլ տուիր. ահա քեզ մի կից<sup>1)</sup> ոսկի, ասաց Զէն Թագաւորազը և փայտահատի ասած կողմով գնաց ընկերի հետ:

Երկուն էլ գնում էին, բայց մէկի սիրտը ուրախութիւնից էր տրըփորըփում, միւսինք վախից ու ամօթից:

<sup>1)</sup> Բուռ:

Երբ հասան մի փառաւոր բնակարանի,  
Զէն Թագաւորազն առաց.

—Յարմար շուաք է, այստեղ արի քիչ հանգտանանք: Եթէ մեր կորուստը այս տանը կըլինի, լաւ, եթէ չէ, ճամբաներս կըշարունակենք:

Քաշուեցին սօսու թանձր շուաքը, պարկերը ուսներից վէր բերին, որսերը հանեցին՝ որը մաշկեցին, որը փետրեցին: Յետոյ երբ չտես մարդու պէս բերանաբաց սօսու շողշողուն տերևներին էին նայում, տեսան երկու զիխաբաց երեխայ նետեր արձակելով, խաղալով մօտեցան իրանց: Զէն Թագաւորազի սիրտը ասես թէ եկաւ բերանին կպաւ նրանց ոսկեմազերը տեսնելիս:

Զէն Թագաւորազը կըակն արել էր. Հէնց որ երեխանց տեսաւ, ուղարկեց որ գնան աղ բերեն իրանց տանից:

Համ երեխանց ուղարկեց Զէն Թագաւորազը, համ ետևներից նայեց: Երեխանց մալրն էլ համ աղ ուղարկեց, համ էլ եկաւ ճամբորդներին ծածուկ տնդղեց և տեսաւ հորսկանի պատառատուած շորերի մէջ մինը իւր եղբայրն է, միւսը իւր ամուսինը:

«Տէ՛ր Աստուած, ասաց մտքումը, առենք թէ ստիպել ես որ նրանք գան իրանց արածը

մեղալ գան. բայց ի՞նչ զարմանալի դիպուածով  
երկու մեղաւորներին իրար ես հանդիպեցրել:

Հորսկաներն այդ բանից անտեղեալ, ներքեւ  
աւագանի մօտ խորոված արին և ամենա-  
համեղ կտորներից մանուկներին առատ բաժին  
տուին:

Մանուկները շուտով ընտելացան նրանց.  
Ժիր, կայտառ բաներ էին. ամեն մի հարց ու  
պատասխանի վրայ անմեղութեամբ «քեռի» կամ  
«հայրիկ» էին կանչում և հորսկանների սրտները  
ծլունգ անում:

Այս բոլորը Ազունիկը թաքուն տեղից տես-  
նում ու լսում էր: Սիրտը լցուել, արտասուքն  
առուի պէս եկել աչքերը ողողել էր:

Մէկ ուզում էր իջնի երեխանց պատճա-  
ռով ներքեւ և ծանօթութիւն տայ ճամբորդնե-  
րին, մէկ էլ վճռոր քանդում էր, որ տեսնի  
թէ վերջը ի՞նչ է լինելու, նրանք ճանաչում են  
թէ չէ: Ազունիկը երեխաներին կանչելու հա-  
մար մօտեցաւ պատշգամբին: Հորսկանների աչ-  
քովն ընկաւ մի աննման, սիրուն հարս. երկու-  
մին էլ դուր եկաւ:

Զէն Թագաւորազը առանց աչքը հեռացնե-  
լու ընկերին թւեռ բրթեց կամաց ու ասաց.

— Ոյս հարսն ի՞նչքան նման է իմ կնկա-  
նը, աւես թէ մի խնձոր կէս արած: Իսկ և

իսկ նա է, ընկեր ջան, մանաւանդ որ որդիքն  
էլ ոսկեքոչոր են: Բայց սիրտս կոտրում է նը-  
րանով, որ կոները ողջ են:

Զէն Թագաւորազը իսկոյն պատասխան  
չտուեց. նա այդ բոպէին մտքի ծովում չարչար-  
ւում էր ու չէր կարողանում իմանալ, թէ ովկ  
է այդ հարսը, որ իւր քրոջ նման է: «Թէ իմ  
քոյրն է, բայ ինչո՞ւ ձեռներ ունի. չէ՞ որ քրոջն  
ձեռները ես ինքս եմ կտրել»: Վախենալով որ  
ինքը ծանգով<sup>1)</sup> ընկած լինի, մնաց լուռ, հարսի  
վրայ նայելիս:

Երկու հորսկաններն էլ իրանց մէջ ջոկ-  
ջոկ համոզուեցին, որ սխալուել են. ոչ մէկի  
կինն է և ոչ միւսի քոյրը: Մինչեւ անդամ ամօթ-  
քաշեցին հարսին հարցնելու, թէ ովկ ես, ի՞նչ  
կնիկ ես:

Վերջապէս զէն Թագաւորազը տխուր կեր-  
պով տեղից վերկացաւ, ասաց.

— Թագաւորազ տէր, յոյսներս զուր էր:  
Երկար մնալուց օգուտ չկայ, վեր կաց ճամբա-  
ներս շարունակենք, տեսնեք ուր ենք գտնում  
մեր կորուստը:

Զէն Թագաւորազը ոչինչ չէր լսում ընկերի  
ասածից. նրա ուշքն ու միտքը ոսկեքոչոր մա-

<sup>1)</sup> Խաբուել, զեր թռչել

նուկների վրայ էր, նրանց պատճառով չէր ուզում սօսու տակից հեռանալ: Մանուկները նապատակի տոտիկներն ու գլուխները վերցրած խաղում էին:

— Հայրիկ, մօռեցաւ երեխաներից մէկը Զէն Թագաւորազին, միւս անդամ որ գաս, ինձ համար փոքրիկ նապաստակ կըբերե՞ս:

Միւսն էլ զէն Թագաւորազի առաջը վագելով ասաց.

— Քեռի ջան, դու էլ որ գաս, ինձ համար նախշուն ծիտիկ կըբերե՞ս:

— Կըբերե՞նք, բալիկներ, կըբերե՞նք, ձեռք-ները նրանց զլխներին քսելով պատասխանեցին հորսկաններն ու սրտակոտոր ճամբար ընկան:

Այդ տան մօտից մի քիչ հեռանալուց յետոյ երկուոր միասին Հառաչեցին.

— Ո՞խ, ի՞նչ կըինէր այդ հարսը կռնատ լինէր, մեզ զուր տեղը ոար ու ձօր չդցէր:

Զէն Թագաւորազն աւելացրեց համարեալալով.

— Ի՞նչքան նման էր իմ կնկանը. ուր էք թէ ձեռները չլինէին:

Միւս ընկերն էլ ասաց.

— Եթէ զէն Թագաւորազը այստեղ լինէր ու այդ հարսին տեսնէր, նոյնպէս չէր հաւատալ, որ դա իւր քոյրն է, որովհետև կռները նա ինքն

է կտրել: Վշտանալ մի՛, Ատսուած ողորմած է. վաղ-ուշ կըպատահեցնի, ում որ ուզում ենք:

Այսպէս խօսելով հորսկանները ճամբէն շարունակեցին տխուր, գլուխները կախ:

Իսկ ջրատար Աղունիկը պատշգամբի վրա! այնպէս էր յուզուել ու լցուել, որ լաց լինելու համար մի մազ էր մնում: Հորսկանները գնալիս Աղունիկը աչքերով նրանց հետեւում էր ու քիչ էր մնում սիրտը հալ գնայ: Մէկ ուզեց ետև-ներից ծվայ, կանգնեցնի. թէ՝ ախր ուր էք գընում, քարասիրտները ինչո՞ւ էք ինձ այս ամայի տեղը մենակ թողում, չէ որ մէկիդ քոյրն եմ, միւսիդ ամուսինը: Բայց ներսից մի ձայն նրան ասաց. «Աղունիկ, բերանիդ հուպ տուր. շատը համբերել ես, քիչն էլ համբերիր»:

Ուզեղ է, այդ ձայնին լսեց Աղունիկը, չծը-վաց, բայց սրտին ընդգիմանալ անկարող եղաւ. էէնց երեխանները մօտն եկան թէ չէ, պատուիրեց, որ վազ տան, ճամբորգներին յետ կանչեն:

Մանուկներն իսկոյն ծկեցին ու ետևներից ճվճվացին.

— Քեռի, հայրիկ, կանգնեցէք, բան ենք ասոնմ:

Հորսկանները կանգ առան: Մանուկները հեւալով, թանչին տալով մօտեցան և փեշներից բռնեցին.

— ՔԵՇՈՒ, մայրիկս քեզ կանչում է, ասաց  
մինը:

— ՀԱՅՐԻԿ, մայրիկս քեզ էլ է կանչում,  
վրայ բերեց միւսը:

Թագաւորագները գարմացան, անդ-մանգ  
եղան, թէ հարսն ինչու պէտք է իրանց կան-  
չի: Ի՞նչքան էլ նախշուն երեխաներին հարցեր  
տուին, պատճառը չիմացան, դրա համար հե-  
տևեցին նրանց ու հասան աւազանի մօտ: Գե-  
ղեցիկ հարսը, որ վերևը կանդնած էր, այսպէս  
խօսեց.

— Դուք անվնաս մարդիկ էք երեւում. օրը  
մթնելու վրայ է, այսպէս ուշ ուր էք գնում.  
գնալներդ զուր է, զիշերը դաշտում կըմնաք.  
եղանակը շատ էլ լաւ չէ: Երեխաներիս որովհե-  
տեւ դուր էք եկել, ես առաջարկում եմ որ հիւր  
մնաք, օթևաններու տեղ ունինք: Առաւոտը Սս-  
տուած կըկանչէք և ձեր ճամբէն կըշարունա-  
կէք: Ի՞նչ էք ասում. յօժար էք թէ չէ:

— Բարի խորհրդին ո՞վ չի յօժար լինիլ.  
Սստուած որդիքդ պահի, շատ շնորհակալ էլ կը-  
լինինք, պատասխանեցին հորսկանները և գնա-  
ցին իրանց համար պատրաստած օթևանում  
հանդստանալու:

Իրիկունը որ հասաւ, Աղունիկը նրանց հա-  
մար լաւ սեղան պատրաստեց, լաւ հարկեց,

պատուեց և փափուկ անկողիններում քնացնել  
տուեց: Ինքը նրանց երեսը չէր գնում, ծառա-  
ներն էին սպասաւորում:

Մինչև ուշ զիշերը երեխաները հիւրերի  
մօտից մօր կուշտը չեկան. նրանց ծնկների վրայ  
նոտած քաղցր-մաղցր խօսում, ծիծաղելու պատ-  
ճառ էին տալիս: Քնելհանգումին Աղունիկը  
երեխաներին կանչեց ու սիրով հարցրեց.

— Նախշուն բալիկներս, ի՞նչ ասացիք, երբ  
հիւրերին կանչելու գնացիք:

— Պայրիկ ջան, ես «քե՛ռի» կանչեցի: Երբ  
կանգնեց, հասայ ու փէշից բռնեցի:

— Ես էլ, մայրիկ ջան, «հայրիկ» կանչեցի,  
վրայ բերեց միւսը. խօ վատ չեմ արել:

— Ջատ լաւ ես ալիք, որդի: Հապա, քու  
հայրիկն էլ դրա պէս մարդ է, շուտով պէտք  
է գայ և քեզ իւր ծնկների վրայ նստացնէ:

Համբուրեց Աղունիկը երեխաներին և ասաց.

— Լսեցէք ի՞նչ եմ ասում երկուսիդ էլ:  
Հիւրերը քնած են. գնացէք ինձ մօտ բերէք  
այն հիւրի պարկը, որին «քե՛ռի» էք ասում:  
Եթէ ասածու անսխալ կատարէք, էղուց ձեզ մի-  
մի նախշուն ծիտ կըտամ:

Երեխաները զգուշ գնացին և բերին պարկը:  
Աղունիկը նրա մէջ երկու ընտիր ինձոր

դրեց և տաս հատ ոսկեզօծ տերեւ։ Բերանը ամուր կապելով երեխաներին ասաց.

—Քեռու համար ճամբի պաշար գրի, տարէք էլի այնտեղ, որտեղից վերցրել էիք։

Երեխաները տարան։ Այս բոլորից զէն Թագաւորազը ոչինչ չիմացաւ, որովհետև անուշ քնի մէջ փշշացնում էր։

Պ

Լոյս ու մութը գեռ քբու քբացուած հորսկանները զարթեցին. կարծելով թէ հարսը քնած կըլինի, չուզեցին անհանգոտացնել. ծառալին շնորհակալութիւն յայտնեցին, թողին օթևանը և պարկերն ուսներին շարունակեցին իրանց ճամբէն։

Բաւական գնալուց յետոյ զէն Թագաւորազը կանգ առաւ և ընկերին գիմելով ասաց.

—Ո՞քան սիրուն, խելօք մանուկներ էին։ Նրանց մէկը քեզ «Հայրիկ» էր կանչում. եթէ քու կինը այդքան գեղեցիկ լինէր, դու աշխարհիս ամենաերջանիկ ամուսինը կըհամարուէլիք։

—Այդ ուղիղ ես ասում, ընկեր, վրայ բերեց զէն Թագաւորազը. բայց չէ որ մանուկներից մինն էլ քեզ «քեռի» էր անուա-

նում։ Եթէ այդ հարսի պէս քոյր ունենալիք, մանուկների պէս էլ քեռորդիք, ով ասես որ քեզ չնախանձէր։

Այսպէս խօսելով հորսկանները փռքրիկ առուն նոր էին անցնում, որ դէպի անտառը կեռման տան, նկատեցին որ հարսի ծառան մի մահակ ձեռին ետևներից վազում է և ձայն տալիս.

—Կացի՛ք, մի գնաք, մեր հարսը կանչում է։

—Ի՞նչ է ուզում, պատասխանեցին հորսկանները. կարելի է նախաճաշ տալու համար է։ Յետ դարձիք, ասա՞ շատ շնորհակալ ենք, ճամբանիրս հեռու է, պէտք է գնանք։

—Ո՞չ, ոչ, շատ հարկաւոր խօսք ունի ասելու, անպատճառ պէտք է յետ դառնաք, թէ չէ ուժով կըտանեմ ձեզ, այս գէս է հրամանը։

Վերջին խօսքը հորսկանների սիրտը ահ զցեց։ Ի՞նչ է նշանակում ուժով կըտանեմ։ Տեսան որ ծառալի հետ զլուխ գնելով անհամութիւն պէտք է ծագի, յօժազուեցին յետ դառնալ, որ իմանան ինչ է պահանջում իրանցից հիւրասէր, սիրուն հարսը։ Գնացին ու շատ ըարկացած գտան. թթու գէմքով այսպէս խօսեց նրանց հետ։

—Եթէկ ձեզ լաւութիւն արի. իբրև լոգնած ճամբորդների հրաւիրեցի տունս և արժա-

նաւոր կերպով պատուեցի, այնպէս չէ:

— Այո՛, այդպէս է, պատասխանեցին հօրսկանները:

Հարսը շարունակեց.

— Բաւական չի, որ առաւօտս հեռանալիս խնայեցիք դատարիլ բերան շնորհակալութիւն անել, ալև շնորքներդ ցոյց էք տուել. ծածուկ մտել էք պարտէզս և գողութիւն արել: Միթէ այդպէս են վճարում ձեր աշխարհում աղ ու հացի փոխարէնը:

Հորսկանները որ չէին սպասում երբէք այդ նախատինքին, մնացին ապշած. յետոյ ուշքի գալով աշխատեցին արդարանալ, որ իրանք ազնիւ մարդիկ են. Աստուած, երկինք այդպէս բան չէին անիլ:

— Ի՞նչ ազնիւ մարդիկ էք, երբ ազահի պէս սօսու տերևներից էլ էք գողացել, պարտէզի ընտիր խնձորներիցն էլ: Ա՛յ ձեզ նմուշները, թէ որոնցից էք պոկել: Ամօթ ձեզ:

Հորսկանները տեսնելով որ հարսն իրանց հաստատ գող է բռնում, միս սին բողոքեցին նրա դէմ.

— Զուր էք այդ տեսակ բան կարծում. մենք ոչ զիշեր ժամանակ օթևանից դուրս ենք եկել և ոչ խնձորի ու ոսկետերևների երես տեսել:

Այդ ժամանակ հարսը բարկացած և հերսոտ աչքերով կանչեց ծառաներին.

— Ճուտ եկեք, փնտռեցէք այս ըոպէիս դրանց պարկերը:

Ժառաները շտապով վրայ ընկան տիրուկու հրամանը կատարելու:

— Մենք ընդդէմ չենք, միամտաբար խօսեցին հորսկանները. թող փնտռեն ոչ թէ պարկերը, այլև մեր գրանները: Եթէ մեզ մօտ մազի չափ զողութեան հետք գտնուի, դատաստանի մատնեցէք: Թող մեղաւորը մահով պատժուի: Կրկնում ենք որ մենք ազնիւ մարդիկ ենք, զուր էք մեղաղբում:

— Լաւ, հիմի կ'երևալ, թէ որքան ազնիւ մարդիկ էք, ծաղրելով խօսեց Սղունիկն ու զեռայո խօսքումն էր, ծառան քեռու պարկից խընձորն ու տերևները հանեց:

Ճէն Թագաւորազը երբ աչքով տեսաւ որ իւր տոպրակից գուրս եկան գողաց սծ բաները, մնաց ամօթից զմբրած: Զէր իմանում ինչ անի. մի ըոպէում հարիւր անդամ գոյն առաւ գոյն տուաւ: Եթէ գետինը պատռուէր, որախութիւնով ներս կ'ընկնէր, միտին թէ հարսի երեսին մտիկ անելուց ազատուէր: Մի քանի ըոպէ լուռ մնալուց յետոյ Ճէն Թագաւորազը տեսաւ որ շփոթութիւնն իրան պատել է, ուրանալիք էլ դուռը

չունի, վիզը ծռած չոքեց հարսի առաջ և աղաչելով ասաց.

— Հաւատած Աստըծուն, ես այդ գողութեան տեղեսկ չեմ, ես մեղ չունիմ:

— Եթէ դու մեղ չունիս գողութեան մէջ, հապա ով է դրել խնձորն ու տերևները պարկիդ մէջ:

— Զդիտեմ, Աստուած է վկայ:

— Կարելի է ընկերդ է դրել:

— Զէ, ընկերիցս այդ բանը հաւատալի չէ: Եթէ դնէր, իւր տոպրակում կըդնէր:

— Ուրեմն զոյր դու ես, որովհետև քու տոպրակից հանեցին խնձորն ու տերևները:

— Ողորմած հարս, ես չեմ ուրանում իմ տոպրակից հանելը, բայց հաւատած Աստըծուն, որ ես տեղեակ չեմ, չեմ զիտում ով է դրել: Աստուած չի վերցնիլ, որ զուր ինձ մեղադրում ես:

Աղունիկն այդ ժամանակ ուղղակի եղօր աչքերի մէջ նայելով խօսեց.

— Գու որ չգիտես ով է պարկիդ մէջ գողունի խնձոր ու տերև դրել, Աստըծուն վկայ ես կանչում, որ հաւատացնես, հապա զէն Թագաւորի աղջիկը գիտէր, թէ դանակը ով է դրել իւր գրանում, որ դու անդութիւն նման չլսեցիր նրա երդումին, լային և զուր տեղը ձեռները կտրեցիր:

Զէն Թագաւորազը մատը կծեց ու գարմացած մնաց իւր ընկերի երեսնիվեր նայելիս: Զէն Թագաւորազի ժուքը կպաւ, երբ ճանաչեց որ առաջը կանգնածը իւր քոյլին է: Հիմի Զէն Թագաւորազի երեսին նայելն էլ ամաչում էր: Ամօթից համարեա կիսամեռ ընկաւ Աղունիկի ոտները և պաղատեց:

— Ներիր, քոյլիմ, անողորմ եղօրդ... Աստըծու արդարութեանը մատաղ. անգութ վարմունքս անպատիւ չ'մողեց. շատ վազուց է սրբատիցս հանգիստն է առել, դէմքիցս ծիծաղը: Քեզ անիրաւաբար պատժելու օրից մի ըսպէ դադար չունիմ:

Զէն Թագաւորազը մէկ իւր ընկերի երեսն էր նայում, մէկ հարսի և ինքն իրան ասում.

— Ա՛յ ընկեր, միթէ դու զէն Թագաւորազն ես, որ սրա ձեռները կտրած լինիս: Եթէ կտրել ես, հապա ինչու ողջ են: Տէր Աստուած, ով է այս կինարմատը: Եթէ իմ կնիկն է, նա ձեռներ չունէր, այս ձեռները ումնից է բան ուզել:

Եղբարը լայիս էր և Աղունիկի ոտքերը համբռւրում: Քուրը խղճակով ասաց.

— Ա՞եր կաց, եղբայր. քեզանից վրէժ առնելու միտք չունիմ: Այն էլ բաւական է, որ դու զղացիկ ես արածիդ վրայ և զդացիկ, որ ես անմեղ եմ: Ներում եմ բոլոր սրտովս: Խղճի խայ-

թը ճակատդ խորշոմներով է լցրել, գլուխդ ու դէմքդ ճերմակ մազերով։ Ինձ պատուհասել տուող կինդ երեւոմ է որ քեզ միմիթարելու տեղ վաղաժամ ծերացրել է։

Զէն Թագաւորագն արդէն հաւատալով որ առաջը կանգնածը իսկ իւր կնիկն է, սիրու արաւ հարցրեց։

— Հապա ինձ չես ներում։ Թէ որ սա քեզ կունատող եղբարդ է, ախր ես էլ նրա քամբադրացրած քրոջը թագաւորի հարս դարձնող երիտասարդն եմ։

— Դու արժանի չես ոչ մի ներողութեան, վշտացած վրայ բերեց Աղունիկը։ Քու կինը իւր խոստման համաձայն ոսկե քոչոր տղաներ բերեց, սպասում էր ուրախ շնորհաւորէքի, բայց յանկարծ թուղթ ես ուղարկում, թէ սպանեցէք մօրն ու նորածիններին։

— Ընդհակառակը, կարմիրով խօսեց Զէն Թագաւորագը, հօրիցս մի թուղթ էի ստացել, որի մէջ զրած էր։ — Կինդ աղատուեց և երկու լակուտ բերեց, ինչ անեմ։ — Ես էլ պատասխանեցի հօրս թէ։

— Աստը տուածի դէմ դժգոհալու ոչինչ չունիմ, պահիք մինչև իմ գալը։

— Ուղիղ, հարցրեց Աղունիկը։

— Աստուած, հող, ջուր, ուղիղ եմ ասում պատասխանեց Զէն Թագաւորագը։

Այս որ լսեց Աղունիկը մնաց զլուխը կախ մտածման մէջ ընկած։ Լութիւնը ընդհատեց զէն Թագաւորագը։

— Ինչպէս երեւում է մի չար մատը կայ, որ փոխել է թղթերը։ Անհոգ կացէք, որդուս սպանողին լոյս զցող Աստուածը ձեր թղթեր փոխողին ծածուկ չի թողնիլ։ Գնանք թղթատարի մօտ, իսկոյն կ'իմանանք։

— Հիմի ներում էս, վախենալով մօտեցաւ Զէն Թագաւորագը։

— Ներում եմ, քաղցր ժպիտով պատասխանեց Աղունիկը։

— Զէ, մինչև չասես, թէ ինչպէս են ողջացել կուներդ, ես չեմ հաւատալ, որ ինձ ներում ես, պնդեց Զէն Թագաւորագը։

— Երբ որ այգպէս է, մինչեւ ես էլ չիմանամ՝ թէ ով է նամակներ փոխողը, չեմ պատմիլ կուներիս ողջանալը, պատասխանեց Աղունիկը և նրանց հետ կունաբունուկ արած գնաց ճաշի։

Հետևեալ օրը ճամբի պատրաստութիւն տեսան ու վերադարձան Զէն Թագաւորի պալատը:

Դերունի թագաւորը կ'ասենաւ մեռած տեղից յարութիւն առաւ, երբ հարսին ու թոռներին ողջ և առողջ իւր առջեւ տեսաւ: Աստրծուն անվերջ փառք տալով անդադար համբուրում էր մէկ թոռների թուշերը, մէկ հարսի ողջացած ձեռները:

— Թղթատար, արի այստեղ, ասաց Զէն Թագաւորազը. ինձ մօտ դալիս ովէ քեզ հանդիպել:

— Ոչով չել հանդիպել, տէր իմ:

— Ճամբին ում հետ ես զրոյց արել, ուղիղն ասա:

— Ճամբին շատ տեղ եմ հանդստացել, բայց զրոյց արել եմ միայն Զէն Թագաւորի հարսի հետ, երբ ուժով հրաւիրեց ինձ պալատը:

— Աշ, Էլի նա, այն նզովեալը, գառնացած բացականչեց Զէն Թագաւորազը. նա է փոխել:

— Ո՞վ, ով, սրտատրով հարցրեց Զէն Թագաւորազը:

— Աւրիշ ով պէտք է լինի, իմ նախանձ

կինը, տխուր պատասխանեց Զէն Թագաւորազը և դարձաւ զէպի Աղունիկը.

— Փոյր իմ, հիմի ամեն բան պարզ է: Մեր ամբողջ ընտանիքի քամբաղբութեան պատճառն է կինս: Ողորմած Աստուածը քեզ պաշտպանել է նրա նենգութիւնների դէմ. հաղար փառք նրան: Կեանքս ու հոգիս վաղուց են թունաւորուած կնօջս ձեռովք: Ես շատ չեմ հեռու գերեզմանից. կենդան մնալուս միակ կարօտն ու փափազը քեզ տեսնելս էր: Արարչին փառք. զրան էլ արժանացրեց: Այսուհետև ապրելը, կեանք քաշելը քեզ է արժան, աննման քոյր իմ. շատ ապրես բաղդաւոր կեանքով և Զէն Թագաւորի ծուխը ծխես քու ոսկեքոչոր որդկերանցով: Ամուսնուդ աշխարհը քաջասիրտ մարդկանցով է լիք, հօրդ աշխարհն էլ ամեն տեսակ բարիքներով ու գանձերով. ապրեցէք ու վայելցէք:

Այս ասելով մօտեցաւ Զէն Թագաւորի ձեռը համբուրեց, դարձաւ փեսայի ու Աղունիկի հետ համբուրուեց, յետոյ նախուն քեռորդիներին գրկեց արտասուալից աչքերով պաշպչեց ու ճամբայ ընկաւ դէպ իւր աշխարհը:

Հասաւ թէ չէ, անխօս հրամայեց որ իւր նախանձ կնկայ ոտն ու ձեռները կապկափեն:

Հրամանը կատարուեց: Յետոյ բերել տուեց

մի՞ կտաղի ձի, իրան ձեռով չար կնկանը ձիու  
ագիլց կապեց և պատուիրեց քարքարուտների  
վրայով այնքան քշեն, որ կնկայ մեծ կտորը  
ականջը մնայ: Եւ արդպէս էլ արին:

Չարն այնտեղ, բարին այստեղ:

Երկնքից երեք խնձոր ընկաւ:  
Մէկն այս հէքեաթն ասող գանձակեցի  
Առաքելին, միւսը նեղութիւն քաշող զրողին,  
երրորդն էլ կարդացողին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0685902

